

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԱՐԺԱՆԱԻՈՐԸ

Պիլսոյ առևտրական հրապարակին վրայ ծանօթ վաճառական Յովհաննէս ԼՖէնտի Էսայեան վերջերս վախճանեցաւ Ֆրանսա։ Այս ժաշը ժամուրին պատեհութիւն հայթայթեց իր սիւնակներուն մէջ ի յիշանակ հանգուցեալին պսակներ զետեղել, որոնք արծաթաշող տառերով «Ազգային բարերար» արձանագրութիւնը կը կրէին։ Հայ Եկեղեցակապութիւնը որուն պարտաւ Պատ. ըրարքը կ'ընթանար, պերճաքարոզ ներբողականներով հաւաստեց թէ երջանկայիշատակը ծերկաթաւաճառը տոհմային եթէ ոչ սուրբերուն բայց Երանելիներուն դասը ապահովաբար արդէն բազմած է։ Եւ որպէս զի Թէրս. հանէի Հասան փաշաներուն զովսդին կեանքը իբր օրինակելի մտատպար հայ ժողովրդին աչքերում առջեւ լուսափայլի հանապազօր, Պատրիարքարանը խորին խորհուրդն յղացաւ անոր սկիզբին հայ տաճարին մէջ դամբանել, Գաղափարի համար մտախրոսացեալ Կերտ. բուններու իբր արժանաւոր բարոյակցի մը նշխարներ։ Ընտանեկան կամ ինչպէս մեր Նորաստիկները կը յիշեն լսել—«գերզաստանական» նկատումներով է որ այս խորհուրդը չիրականացաւ։

Քանի մը տարի առաջ Բերա կառուցուած դպրոցական շէնք մը եւ կիցը փոքր ժամ մը, փառապանծ կսթողներն են որոնց ի տես հայ սիրտը Էսայեան անուան մեծարանքովը պարտաւոր է զեղանիլ, ինչպէս կը հաւատեն օրագրութիւնը, Եկեղեցակապութիւնը, եւ տեսակ մըն ալ Հանրային կարծիք։ Ու կուզեն մոռցնել որ, այդ վարժարանական շէնքը եթէ Բերայի Հայոց նիւթական օգուտ մը կ'ընձեռէ սակայն պայմանագրութիւնը որուն վրայ հիմնուեցաւ անիկա, մեր ազգային բարքերուն մէջ գաղափարի թշնամութեան, զգացումի ջնջման նըկրտող քապականիչ նորութիւն մը մտցուց։ Բերայի Ազգային վարժարանին մեր Նարեկացիին անուանը նուիրուած էր. նոր շէնքը կառուցանողները, կամ աւելի ճիշդը՝ անոր կառուցման միջնորդները, խորտակեցին բանաս.

տեղական, գրական յիշատակարանը որ սերունդներու հոգիին մէջ Հայ հայրենիքի պատկերը ցոլացուցած էր։ Էսայեան եղբայրները անօրինակ յելուզակութեամբ այդ կրթական Հաստատութեան ճակատը խարանեցին իրենց առևտրական ֆիրմայովը։ Բարոյական վաշխառութիւն մը որուն նախընթացը արձանագրած չէ կ. Պիլսոյ հայ կրթութեան քարեգրութիւնը։

Մեր այն ընթերցողներուն որոնք անտեղեկ են Բերայի վարժարանին վերակառուցման գայթակղական պատմութեանը, նախ ծանօթացնենք Բերայի թաղին եւ Էսայեան եղբայրներու միջեւ ստորագրուած պայմանագրութեամբ Ազգային իրաւունքին բանաբարուժ, բանաբարուժ որ Պատրիարքարանին տկարացմամբ օրինաւոր համարուեցաւ։

Նարեկան վարժարանը վերաշինուեցաւ ընկերայնութեամբ Բերայի թաղին եւ Էսայեան եղբայրներուն։ Ասոնք շէնքին կառուցմանը համար 5,000 ոսկի գրին, իսկ թաղը 10,000 ոսկի գնահատուած հողը տուաւ. ուրեմն շէնքին նիւթական ամբողջ արժուոյթիւնը 15,000 ոսկի է, որուն երկու երրորդը Վերայի թաղին կողմէ տրուած, եւ մէկ երրորդը միայն Էսայեան եղբայրներէն։ Հիմնարկութեան մը ծախքերուն փոքր մասը հայթայթողը իրաւունք չունի զայն ամբողջապէս իր անուանը սեփականել։

Նիւթական շէնքի մը գոյութեամբը դպրոց մը հաստատուած չհամարուիր. Նարեկեան վարժարանը իր ծախքերուն համար պէտք ունէր տարեկան 750 ոսկիի զօր Բերայի թաղը կը հայթայթէ ամբողջապէս։ Այդ գումարը Պիլսոյ հրապարակին տակոսի միջին հաշուովը 15,000 ոսկիի դրամազուտ մը կը ներկայացնէ։ Ուրեմն Նարեկեանի կառուցմանը եւ պահպանութեանը համար 30,000 ոսկիի դրամազուտ մը յատկացուած է, որուն վեց բաժնին հինգը՝ այսինքն 25,000 ոսկին Բերայի թաղին կողմէ տրուած է, իսկ մէկ բաժինը՝ այսինքն 5,000 Էսայեան եղբայրներէն։ Ու դրամազուտն զատ թաղը կը նուիրէ դպրոցին բարոյական ու նիւթական աշխատութիւն մը Թաղականներու, Հոգաբարձուններու միջոցաւ։ Երեւակայինք առևտրական ընկերակցութեամբ հաստատուած տուն մը որուն դրամազուտն ստուար քանակը հայթայթող, եւ միանպաստան ամբողջ աշխա.

տութիւնը կատարող ընկերոջ անունը չլիջուի, այլ զբարամազը ին պարտի մասը հայթայթող եւ ո՛ր է աշխատութեան շմանակցող միւս ընկերոջը անունը հստակօրէն հրապարակին վրայ:

Պատրիարքարանը տկարացաւ եւ այս պայմանադրութիւնը վաւերացուց, վասն զի Բերայի թաղը թէեւ հողը ունէր, թէեւ կալուածները ունէր որոնց վարձովը զբարոցին ծախքը կը հոգար, բայց չէնքի մը կառուցմանը համար պատրաստ հնչուն գրամ չկար. թաղին այս նեղ վիճակէն օգտուեցան Էսայեան եղբայրները, իրենց փաստաւորութեանը յագուրդ տալու համար: Վաշխառուն տառապանքի մէջ շուարեալն է որ կը ճիրանէ:

Այս հարստահարութիւնը, ինքնին գատապարտելի, շատ աւելի նողկալի կը թուի երբ գիտնանք որ Գարոցին կառուցման ծախսուած գրամը թէեւ ուղղակի Էսայեան վաճառատունէն տրուած է, բայց ուրիշի մը աղգային կրթութեան անուղղակի նուիրած նպաստն է: Էսայեան եղբայրները իրենց մատուցուած մեծակալ ծառայութեան մը փոխարէն հատուցանելիք պարտք մը ունէին և վճարեցին: Այս էջերուն մէջ արդէն 1898ին հրատարակուեցաւ Նարեկեանին վերակառուցմանը յատկացեալ գրամին պատմութիւնը. աւելորդ չէ անգամ մըն ալ ընթերցողին յիշողութեանը ներկայացնել զայն:

Շահագիտական ընկերութիւն մը Պուլկար-Տաղի հանքերուն մենաշնորհը ստացած էր. բաժնեթուղթերը մեծ մասամբ Հայոց ձեռքն էին, և ասոնց մէջ ալ Էսայեան տունը ստուարագոյն գրամազուրկ կը ներկայացնէր: Շահագործման ձեռնարկը անյաջող ելլելով ընկերութիւնը սնանկանալու վրայ էր, Էսայեան տունը 70,000 ոսկի բռնուած կը մտար: Կորուստի վտանգը անխուսափելի կ'երևնար երբ բարեբաղդ պատահումով մը հանգուցեալ Միքայէլ փաշա փորթուզալ այդ միջոցին թիւրքիոյ ելմտական նախարարութեան Խորհրդական անուանուեցաւ: Այդ ազնուամիտ հայը իր կարճատեւ պաշտօնավարութենէն օգտուելով Պուլկար-Տաղի գործին մէջ հայ գրամատէրներուն նպաստաւոր կարգադրութիւն մը ընել յաջողեցաւ. մասնաւորապէս Էսայեան տունը փրկուեցաւ: Փորթուզալ էֆէնտի որ երեք կաշառակեր չէ եղած, շուրջ սակայն առանց վարձատրութեան այսպիսի ահագին ծառայութիւն մը մատուցանել Էսայեան տան, ուստի պայման գրաւ որ ի փոխարէն իրենց փրկութեան, Էսայեան եղբայրներն ալ ազգին դարձող մը պարտաւոր պիտի ըլլան կառուցանել: Ահա այս պարտքերնին կը գոր Էսայեան եղբայրները հասուցին երկարատեւ սպասումէ մը յետոյ: Շէնքին կառուցմանը յատկացուած գրամազուրկ տարիներով գործածելէ յետոյ թողած շահովն կը որ շինեցին վարձարանը:

Ինչպէս կը տեսնուի շատ պահանջկոտ հանդիսանալու իրաւունքը չունէին:

Սպարթալեան իզմիրի Ազգային վարժարանը հիմնովին վերաշինեց իր գրամովը, առանց սակայն անոր Մեթոդեան նուիրական անուան տեղ իր մականունը հոն դրոշմելու: Բնական է որ ազգին առջեւ մեծարելի բարեգործ մը համարուի, իր յիշատակը առանց ջրնապատութեան յարգուի: Իզմիրցի վաճառականը հետեւող մը եղած կը հիներէն տրուած աւանդական օրինակին, «գրամը ինէ, զօրութիւնը սուրբէն»:

ՅՈՒՆՍՏԱՆԵՆՆԵՐ ԿԳՍԱՂԱՍԾՅԱ

Պոլսոյ հայ գողթականութիւնը իր հիմնած դպրոցները նուիրած է անուններու որոնք մեր ցեղին քաղաքական, կրօնական, գրական պատմութեան հոյակապ ներկայացուցիչներն են: Հոս Սամաթիա Սահակ Պարթեւն է, հոն Խաղաղ Ներսէս Հայրապետը, վերը Բերա Նարեկեցին, անդին Օրթագեղ Ս. Թարգմանիչները, ասդին Արամը որոնք մեծութեան դարերու հոգին նոր սերունդներուն վրայ կը հանգչեցնեն: Գում-Գաբուի Մայր-Վարժարանն է միայն որ ազգին միաձայն կոչուածով նաև Պէզճեան անունը կը կրէ, բայց Խաղաղ ամբարան հայութեան էն եզակիս զէմքերէն մէկն է իր մտքին զօրութեամբը, իրազգասիրութեան անսահմանութեամբը:

Ինչ պիտի պատմէ հայ տղուն հանրային դպրոցի մը ճակատը գրոշմուած առևտրական անուն մը, ինչ զաղափար կը մարմնացնէ անիկայ, ինչ յիշատակ չը բերէ հետը, ինչ մտատիպար կ'ընծայէ նորածիլ պատանեկութեան:

Պատահականնիս: Քսանեթթ, քսանեթթ տարի առաջ պոլսեցի բանաստեղծ ուսուցիչ մը ֆրանսերէն լեզուի մէթոտ մը տպագրել կուտար Վենետիկ. հրատարակութեան ծախքը նուիրած էր հայ երիտասարդ մը որ գրամատան մը մէջ օգնական-արկղակալի պաշտօն կը վարէր: Գիրքը բնականաբար, ըստ հնաւանդ սովորութեանց, «բարեբարին» անուանը նուիրուած էր: Չօնին մէջ բանաստեղծը հայ մանուկներուն կը ձայնէր, «Ո՛վ Հայկազուն պատանիք, դուք ալ նմանօր եղէք այս մեծ երիտասարդին օրինակին»:

Դասագիրքը Պոլիս հասնելէն քանի մը օր ետքը «օրինակելի երիտասարդը» կը բանտարկուի, վատահոլութեան զեղծումի տմբաստանութեամբ. ու երեք տարուան ալ բանտարկութեան կը գատապարտուի, առանց վերաքննութեան զիմումի հարկը տեսնելու: Եւ ահա Ահմէտ մէթոտի մեր հայացուցիչը, խելայեղ, դպրոցները կը վազվառէ, և տարածուած քանի մը օրինակներուն ձօները աճապարանքով կը պատրաստէ: Հետեւելու շա ախորդ օրինակ մը յանձնարարած էր: Դասագիրքը սակայն կրնար հինգ վեց ամիս առաջ Պոլիս հասած ըլլալ, կամ արկղակալը հինգ վեց ամիս ետքը ձերբակալուեր. ու այդ դասագիրքը իր Չօնովը Պոլիս և նա...

հանգնեցրը սփռուած պիտի ըլլար:

Պատգհամը էր որ այլ վստահութեան զեղծումը երևան եկաւ: Օգնական—արկղակայը առանց զժրագոյ զիպուածի մը միջամտութեանը պիտի շարունակէր օրինակելի տիպար մը մնալ մեր նոր սերունդին համար: Անտարակոյ դասագրքին հեղինակը յանցաւոր չէ ան հատի մը ներքին գաղտնիքներուն անտեղեակ մնալուն պատճառաւ, բայց յանցաւոր է երբ նոր սերունդին մը տատիպար մը կը ներկայացնէ, առանց անոր վրայ ընդ նըշմարելու գերազանց յատկութիւն մը:

Այս յիշողութենէն ընթերցողը կրնայ ինքնին հարկ եղած եզրակացութիւնները հանել: Չենք գիտեր, կամ չենք ուզեր գիտնալ թէ զիպուածը ինչ խաղ կարող էր, կամ զեռ կարող է, խաղալ այս ինչ այն ինչ հայ ունեւորին գաղտնիքներուն յայտնութեանը մէջ: Ամէնքն ալ կրնան պարկեշտ մարդեր եղած ըլլալ կամ անպարկեշտներ, նման բերաւոր ուրիշ Հայոց: Բայց իր մակնունը նոր սերունդին բարեխօս շնորհող անհատները իրենց անձին մէջ, կամ գոնէ իրենց ընտանեկան աւանդութեանց մէջ, մտքի կամ սրտի ո՛ր է է եզական առաքինութեան մը գիծը փալեցուցած ըլլալու էին: Ամէն բարեխօս օւրբ իր առաքինութեանց պաշարը միասին կը բերէ:

ԱՆՏԵԱԼԻ ԴԷՄՔԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՆՍ

Վերնտիկ տպագրեալ ութսուն երեսով տետրակ մը ստացայ այս օրերս: Գրիգոր Աղաթոնի կենսագրութիւնն էր: Անձանօթ հեղինակը ուզած չէ, ըստ իր յայտարարութեան, բանաստեղծի խանդով երգել, կամ իմաստասէրի մտքով քննել կեանքը անձնաւորութեան մը որուն անունովը Թիւրքիոյ իշխանութիւնը քաղաքական նոր դարադիտի մը սկզբնաւորութիւնը Եւրոպայի կը հոչակէր: Մէկտեղ բերուած քանի մը ծանօթութիւններ, դամբանականներ, ոտանաւորներ եւ որոնք իրենց պէսպիսութեանն ու պարզութեանը մէջ եղանակի մը կեանքը մասամբ դուշակել կուտան, ինչպէս աւերակներու պեղումէ գտնուած անօթներ եւ գարգեր հին դարու մը մթութիւնը կ'առկայծեն: Աղաթոն ու Ներսէս, Օտեան ու Տէմիրճիպաշեան, Սերվիչէն ու Թէրզ-

եան կը յօրինեն մթափայլ երանգներով մօզայիկեան պատկեր մը որ նախապատմական ժամանակ մը ինչեցնել կը թուի: Այո՛, թէն հազիւ երեսուն տարի կը բաժնէ մեզի Աղաթոնեան օրերէն, բայց Թիւրքիոյ քաղաքական վերանորոգման երազանքներու ցնդումը, գաղափարներու յեղաշրջումը: արիւնաթորմ հայութիւն մը այլ 1868 թուականը մեր աչքերէն ստուերած մած կ'սքօղեն Շամիրամեան թուականի մը մթագնութեամբը:

Գրիգոր Աղաթոնի անունը հիմակ ա'լ չյիշուիր: Մոռցուած են արդէն, ու պիտի մոռցուին հետզհետէ Ֆէրուհիան, Տափուտ, Ապրօ, Սերվիչէն, Չամիչ, Տիւզ, Գազազեան, Նուպար, ամէնքն ալ: Քանի մը էջերու հատոր մը Օտեանի յիշատակը կրնայ պահել: Միքայէլ Փորթուզալ պիտի ապրի մասնագէտներու շրջանակի մը մէջ, իր պատմական աշխատութեան հրատարակութեամբը: Մոռացումը ճակատագրական զժբաղդութիւնն է ամէն քաղաքական անձնաւորութեան, եթէ Քափուր մը, Պիզմարք մը չէ: Կլատութիւն անունը արդէն այլ եւ չթմունքներու վրայ չթռչտիր: Եւքսթրի կը մնայ:

Պատմութիւնը սակայն կը հաւաքէ ցեղի մը կեանքը շինող անձնաւորութեանց յիշատակները, ու անոնց մով կը ստեղծէ աչգային թանգարան մը ուր ժողովուրդը կը հրահանգի, եւ իր տոհմը սիրելու եւ մեծարելու կը վարժի:

Մեր արդի պատմութեան մէջ Աղաթոն Գրիգոր շատ ուշագրաւ էջ մը գրաւելու իրաւունքը ունի: Առաջին քրիստոնեան եղաւ որ իր տաղանդովն ու նկարագրովը իսլամութեան խալիֆան եւ Եւրոպան վստահացուց թէ Բայազին ազատագրութեան եւ բարձրացման ժամանակը հասած է, և թէ օսմանեան կայսրութեան պահպանութիւնը պիտի ապահովուի տիրապետող եւ տիրապեալ եալ ցեղերու միջեւ խտրութեան գաղափարին ջնջումովը: Աղաթոն 1868ին Թիւրքիոյ Հանրօգուտ շինութեանց նախարար անուանուեցաւ: Իրմէն ետքը ուրիշ քրիստոնեաններ ալ հետզհետէ երկրին բարձրագոյն կառավարութեանը մասնակցեցան, ինչպէս՝ Տափուտ, Քաթաթեան, Սամայ, Յակոբ փաշաները: Թիւրքիոյ վիւքելային մէջ քրիստոնեաններու բազմիչը այլ եւս սովորական երեսիթ մը համարուելով բնականաբար առաջին քրիստոնեայ նախարարի մը անուանումին ամբողջ կարեւորութիւնը կարող չենք ըմբռնել: Հօրս պէս պաշտպանուած բերդի մը վրայ դրօշակ նախ պարզօղ զինուորն է որ իր բանակին արիւնքները մարմնացումը կը հանդիսանայ:

Իսլամը քրիստոնեանները իրենց երկիրներուն մէջ ջախջախելէ յետոյ զանոնք երկաթէ ձեռքով մը միտ ստրկութեան մէջ կը պահէր: Ապրելու եղանակ մը սակայն հարկ էր ստեղծել, ու քրիստոնեանները գիտցան բաւական ճարպիկութեամբ վարուիլ զօրեղին հետ: Հա-

յերր իրենց մասին աղէկ քաղաքագէտ գտնուեցան, եւ իսլամ փաշաներու գործի ընկեր, սեղանաւորք խորհրդական, մտերիմ բարեկամ դառնալով ապրեցան: Այդ քաղաքագիտութեան գաղանիքն էր իսլամին նախանձը չգրգռել, եւ ամէն առթիւ հաւաստեալ իմրամին թէ ինք հայ քրիստոնեան իսլամին պեճտէն է միշտ: Երկրին վարչութեան մէջ քրիստոնեան կրնար կարեւոր պաշտօններ վարել բայց նախարարի մը ստորագրութեամբ չու պայմանաւ: Նախարարութեան բարձրացումը ներքին չէր: Իսլամական այս քաղաքականութիւնը խրամատեղու համար պէտք էր մեծկակ ուժով մը ներկայանալ անոր գէժ, ուժ մը որուն ենթարկուելու հարկին մէջ գտնուէր իսլամը, Աղաթոն այդ ուժին մարդը եղաւ:

Օսմանեան կայսրութիւնը երբ այլ եւս իր զինուորական գորութեան անկման շրջանը մտաւ, այնուհետեւ ա՛յ իր գոյութիւնը ո՛չ թէ աշխարհակալութեամբ այլ խաղաղասիրական միջոցներով պիտի պաշտպանէր, ուստի եւ վարչագէտներու, մասնապետներու պէտքը ըզգաց: Հայը իսլամ իշխանութեան ներքեւ իր առջեւ բաց զինուորական ասպարէզի մէջ յառաջացման պատգիւծութիւն չունենալով, իր մտքին կարողութիւնները նուիրած էր վաճառականութեան, սեղանաւորութեան և արհեստի, ուստի եւ խաղաղութեան կեանքի մը պահանջուններուն օգտակարապէս ծառայելու վիճակին մէջ կը գտնուէր: Մանաւանդ որ հայը թիւրքերուն հետ երկարատեւ կենակցութեամբ մեծ սասամբ իւրացուցած էր անոնց բարքերը, որով առանց մեծ դժուարութեան հայ եւ թիւրք կարող էին իրարու հետ վարուիլ: Եւ ահա օսմանեան կայսրութեան տկարացման թուականէն հայ ցեղը թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ սկսաւ մեծ ազդեցութիւն ունենալ: Տիւրքեաններ, Ղազէղ Արթին, Տատեաններ, Պաշեաններ և ուրիշներ իրենց մեծաշունչը ըրին երկրին վարչութեան մասնագիտական գանազան ճիւղերը: փողերանոց, վառօղակաւորութիւն, ճարտարապետութիւն Հայոց ձեռքը կը գտնուէին, և հայերն էին որ երկրին Ելեւմուտքին մէջ մեծկակ բաժին մը ունէին:

Չարգացած մասնագետներուն պէտքը օրէ օր աւելի զգալի կ'ըլլար մանաւանդ երբ Եւրոպայի հետ թիւրքիան սերտ յարաբերութիւններ սկսաւ հաստատել Խորհիմի պատերազմէն յետոյ: Իսլամը՝ խորամանկ, վարպետ, նրբամիտ քաղաքագէտներ շատ զիւրութեամբ առատօրէն կրնար ունենալ, վասն զի բնածին տեսակ մը յատկութիւններ կը բաւէին իսլամ պիւնազէտներ առաջ բերելու համար: Բայց Եւրոպայի ծեղ գործնական խնդիրներու վրայ խօսելու եւ բանակցելու համար պէտք էր մտաւորական մեծ պաշար մը, զոր մէկ օրէն միւսը կարելի չէ պատրաստել, այլ մեծ աշխատութեամբ շատոնց հարկ է ամբարած ըլլալ: Իսլամը այդ պատրաստի մարդը չունէր, եւ ահա ներկայացաւ թայս մը որ

կրնար Եւրոպայի մասնագէտներուն հետ հաւասարէ առ հաւասար խօսիլ, յանուն օսմանեան կայսրութեան. այդ մարդը Աղաթոն Գրիգորն էր: Իսլամը այդ տաղանդին տոջեւ խոնարհեցաւ. եւ երբ պետական շատ կարեւոր պաշտօնով մը Աղաթոն Բնրիգ կը գտնուէր Սուլթան Ազիզ կը վիճեցալին խորհրդովը այդ քրիստոնեան համարօգուտ շինութեանց նախարար անուանեց: Թանձին Աղաթոնի թայսն առաջին անգամ ըլլալով կը մտնէր իսլամ նախարարութեան խօրհուրդին մէջ՝ եւ երկրին վարչութեան մասնակցելու իրաւունքը սկզբունքով ընդունիլ կուսար: Հալազարդութեան թուականը գործնականապէս բացուած էր:

Իր աղայութեանը Գրիգոր Աղաթոն խաօզեղի ներսէսեան վարժարանին մէջ զբաղան գիտութեանց համար իր մտքին յարմարութեամբ ցոյց տուած է՝ Երկրագործութեան քերթապետական էր իր բնատմիքին մէջ, ուստի երբ 1840ին Բարիգ զրկուեցաւ իբր՝ սուսանդի երկու տարիէն աշակերտեցա՞ծ կրիտիոնի երկրագործական համբաւաւոր վարժարանը, ուրիւ 1847ին շրջանաջարտ դուրս կ'ելլէր ո՛չ ձիայն իր վկայականովը այլ տեսչութեան եւ ուսուցչական մարմին յատուկ գովեստներուն արժանացած:

Այս առթիւ կենսագրականին հեղինակը կը պատմէ թէ այդ ատենները սովորութիւն էր որ կրիտիոնի առաջին շրջանաւարտները Ֆրանսայի թագաւորէն ընթրիքի կը հրաւերուէին: Գրիգոր Աղաթոն առաջին աշակերտներէն ըլլալով Լուի-Ֆիլիպի հետ ճաշելու պատեհութիւնը կունենայ: Ֆրանսայի թագաւորի մը հետ սեղանակից գտնուելու առիթը շատ Հայոց չէ ներկայացած: Սեղանին ներկայ կը գտնուի եղբր թիւրքիոյ զեսպան Բէշիտ փաշան ալ, որուն Լուի-Ֆիլիպ զիտել տալով երիտասարդ Աղաթոնի յաջողութիւնը զայն թիւրքիոյ երկրագործական ապագայ մեծ գործիչը կ'անուանէ. գուշակութիւն մը որ իրականացաւ:

Աղաթոն 1847ին Պոլիս վերադարձաւ. մինչեւ մահուան թուականը, 20 տարուան ժամանակամիջոց մը, վարած պաշտօններուն պատմութիւնը արտասովոր հարկը չիմ տեսներ. ամէնքն ալ երկրագործական, առևտրական, վարչական եղած են: Չինքը հետզհետէ կը զրտնենք 1864-1866 թուականներուն օսմանեան հեռագրութեան և թղթատարութեան ընդհանուր տնօրէնի կարեւոր պաշտօնին մէջ: Հեռագրական միջազգային համաժողովի մը պատուիրակ կը կարգուի 1866ին թիւրքիոյ կողմէն: Դարձեալ պատուիրակի պաշտօնով 1867 օգոստոսին Բարիգ կը զրկուի, թղթատարական միջազգային համաժողովի մը անդամակցելու համար:

Իր պաշտօնը կը շարունակէր եւ համաժողովը իր աշխատութիւնները վերջացնելու վրայ էր երբ Աղաթոն Պոլսէն հրահանգ կ'ընդունի աշխատիլ թիւրքիոյ մէջ օտար թղթատարական տուններու բարձման խնդրին: Ու

կը յաջողի սկզբունքով ընդունել տալ այս մեծ խնդիրը։ Մատուցուած ծառայութիւնը այնքան մեծ էր որ իսլա- մական գողութիւնը իսկ կը պարտաւորի զինաթափ ըլ- լալ։ Սուլթան Ազիզ 5,000 ոսկիի նուէրէ մը յետոյ այդ հրահրութիւնը Հանրապետ շինուածեանց նախարար կ'անուանէ եւ հրովարտ սկը կը ղրկէ Բարիզ։ Յրանսայի կայսրը Նաբոլէոն Գ-ի կը շնորհաւորէ քրիստոնէին այս յաղթանակը նուիրելով անոր Լէժիօն տ'Օնէօնի հրամա- նատարութեան աստիճանի խաչը։

Նոր նախարարը պարտաւոր էր ատեն մը եւս Յրան- սայի մայրաքաղաքը մնալ որպէս զի հարթէ սկզբունքով ընդունել տուած որպէս զործնական զժողովրդութիւն- ները, բայց հիւանդանալով կը վախճանի 1868 ապրիլ 27 (մայիս 4) ին։

Օտար թղթատարական տուներու թիւրքիայէն ջըն- ջերու որոշումը կը ջնջուի հայ նախարարին մահովը։ Պետութիւնները կը յայտարարեն թէ Աղաթօնի վրայ ու- նեցած իրենց վստահութեամբն էր որ սկզբունքով հա- լաչնած էին թիւրքիայ մէջ օտար թղթատարներու ջըն- ջումի առաջարկին։ Իրենց դէմը այլ եւս չեն տեսներ ո՛ր եւ է անձնաւորութիւն մը որ նմանօրինակ վստահու- թիւն ներշնչէ իրենց, ուստի եւ որոշումին իբր չեղեալ կը նկատեն։

Աղաթօն Բարիզի տնտեսնադէտներու ընկերութեան թղթակից անգամ էր. մայիս 5ին, ժողովի գումարմանը, նախագահը ծանուցանելով իրենց անգամակցին մահը կը յայտարարէ թէ «Այս մահը զգալի կորուստ մըն է տնտեսական գիտութեան» և հանգուցեալին կենսագրու- թիւնը բնիկ յետոյ կ'աւելցնէ. «Ելեմուք զվրայ զիրք մը պատրաստած էր, որ Ֆրանսերէն եւ թիւրքերէն պիտի հրատարակուէր, եւ որով Աղաթօն էֆէնտի զարուս էն հռչակաւոր տնտեսագէտներուն կ'ածրք պիտի դասուէր... «չէք կրնար հաւատալ, բարեկամ, կ'ըսէր ինծի, թէ աշ- խարհային արկածներուն մէջ մարդ որչափ ինքզինքը եր- ջանիկ կը զգայ երբ իր ճամտանքը հասկարտ է, և մարդ- կութեան այ ծառայութիւններ մատուցած է։» Եւ որով- հետեւ իր կեանքը քաղաքացիի, պաշտօնատարի և գի- տունի կատարեալ տիպար մը եղած է, երեսուն միլի- ոնի ժողովուրդ մը անոր մահը պիտի ուրբայ։ Միւ- թարուինք, պարոններ, որ այսպիսի մարդ մը մեզի թըղ- թակից ունեցանք, ե՞՞ որ ամէն անգամ պաշտօնով Բարիզ եկած ատեն մեր նիստերուն ներկայ գտնուելէ չէր թե- րանար երբեք։»

Կենսագիրը թէեւ երկարօրէն չի օտիր հայ նախարարին ազգային կեանքին վրայ, բայց անոր թողած յիշատակը յաջոր է։ Երբ հող գիտունի մը գլխովը վարած է իր ամէն ազգային պաշտօնները որոնք բազմաթիւ եղած են։ Թաղական, երեսփոխան, քաղաքական ժողովի անգամ, Շահնազարեանի վարժարանի հոգաբարձու ամէն պաշ- տօններն այլ լնչեղով եւ խնձորստեղով կատարած է։

Աղաթօնի, իբր հայ մարդու, լաւագոյն տիրողուններէն մէկն է իր մասնակցութիւնը Բարեգործական Հիմնար- կութեան։ Այդ ընկերութիւնը նպատակ ունէր «ազգին որը անտէր և չքաւոր տղաքը՝ երկրագործութեան ու արուեստից զբաղեցնելու միջոցներն ի գործ դնել։» Աղաթօն ատենապետն էր այդ ընկերութեան, Օտեան դեր-ատենապետը, եւ Պէշիկթաշեան ատենադպիրը։

Այս առթիւ տետրակին հեղինակը կ'ըսէ «Այս ընկե- րութիւնը 1868ին 2,300 ոսկի ունէր. իր հիմնադրին մահէն վերջ կորսնցուց իր փայլը, եւ շարունակուեցաւ կիսամեռ. մեզի ծանօթ է մինչեւ 1872ի մայիս 20, յոր- ժամ 3355 ոսկի ունէր. ինչ եղաւ ընկերութիւնը, ինչ եղան զրամները։

Ունեցած տեղեկութիւններս կրնամ հաղորդել։ Ըն- կեցքութիւնը կիսամեռ վիճակի մէջ ինկաւ, վասն զի Հա- սունը զայն կառավարութեան մատնանիչ ըրած էր իբր Կիլիկիոյ մէջ արստամբութիւն պատրաստող մարմինը։ Ընկերութեան կողմէն բժիշկ Շիշմանեանի (Մերենց) կի- լիկիա ղրկուելը այս գրպարտութեան պատրուակ եղած էր։ Ընկերութիւնը անկարող գտնուելով իր նպատակը իրագործելու բնականաբար կազմ ի կազմ կ'ընթանար։ Դրամագլուխը օսմանեան քօնսօլիտէի վերածուած էր, և Ղալաթիա հայ սեւանաւորի մը քով կը մնար։ Թիւրք թուղթերուն անկուսովը Բարեգործականին գումարն ալ գրեթէ փճացաւ։ Արարատեան ընկերութիւնը 1877- 78ին զիմելով ընկերութեան անդամներուն, տարեկան գու- մար մը խնդրեց։ Քառասուն ոսկի յատկացուեցաւ վաս- պուրականի մէջ յանուն Բարեգործական ընկերութեան Նախարարութեանի մը բացումին։ Պայմանագրութիւնը չորս տարուան համար էր։ Դպրոցը բացուեցաւ կարծեմ Կիւս- նենց գեղը. եւ մեր պաշտօնավարութեան միջոցին այդ գումարը տարուէ տարի կ'ըստանայինք։ Կարծեմ ամ- բողջ զրամագլուխը 400 ոսկիի իջած էր քօնսօլիտէներուն կորուստովը։ Մնացորդ զրամը, ինչպէս տեղեկացայ Բա- րիզ, ազգային օգտակար գործերու յատկացուած է։



Տետրակին մէջ շահեկան մաս մը կը կազմեն Աղա- թօնի դազաղին վրայ արտասանուած դամբանականնե- րը։ Երբեք չէր քարոզիչը, վարժապետեան Ներսէս եւ պիտիպոս, դամբանական քարոզը խօսած է. Սերվիչէն եւ Օտեան քաղաքական տեսութիւններ պարզած են. բանաստեղծութիւն մը Թովմաս Թէրզեանէ, բանաս- տեղծութիւն մը Շահնազարեան վարժարանի ուսանող Եղիտ Տէմիրճիպաշեանէ, եւ քանի մը խօսք ալ արտասա- նած է Շահնազարեանի սաներէն ժողովուրդը Յարու- թիւն Գալուստեանն՝ կը ցաւիմ որ հեղինակը արտասուած չէ քրոնիկ Վր որուն համար կ'ըսէ «նշանաւոր է մայիս 15ի Մախսիսի մէջ տեսնուած Պարոյր օտորագրութեաք

բորնիկը :» Այդ արտատպումով աչքերնուս առջև ամբողջապէս պատկերացած պիտի ունենայինք այդ ժամանակները արդէն հասունցած, եւ կամ նոր փթթելու վրայ եղող գրականութեան զանազան նմոշները : Յիշուած հինգ անուններէն չորսը 1868ին մեր հանրային կեանքին ու գրականութեան մէջ կարեւոր տեղ մը կը զբաղեն : Հինգերորդը՝ Տէմիրճիպաշեան, հոչակ ստանալու նախասահմանեալ էր : Ժառանգաւորը ինծի անծանօթ կը մնայ :

Ողբերը կը բացուին Ներսէս եպիսկոպոսի դամբանականովը : Առաջին տողերէն իսկ միտքս կը թափառի յիշումներու աշխարհը : Այդ միևնոյն պարբերութիւնները ուրիշ տեղ մըն ալ կարգացած եմ, բայց ո՛ր : Եւ ահա ճիշտ այս տողերը գրած պահուս կը յիշեմ : Պոսիւէի մէկ դամբանականին սկզբնաւորութիւնն է. կարծեմ Անրիէթինը : Ես ալ շատ տարի առաջ կարդացած եմ անոնք, դպրոցի գրասեղանին վրայ, 1869ին Վենետիկ անկէ ի վեր յիշելու շատ բաներ լեցուեր են ուղեղիս մէջ : Ուստի ճիշտ ու ճիշտ չեմ կրնար ըսել : Բայց սա սկզբնաւորութիւնը՝ «Ահա մեր կասկածը ճշմարտեցաւ, ահա մեր երազները մթացան, ահա մեր վարանքը վերջացան : Ո՛հ քանիցս սրտերնիս կը ճմլէր, քանիցս մըտքերնիս կը թռչէին կ'երթային վսեմափայլ հիւանդին ջով...» եթէ ոչ բառ առ բառ Պոսիւէն է, բայց կատարելապէս անկէ կաղապարեալ է : Քննութիւնը կը թողում Բագրատունիին թարգմանութիւնը ունեցողներուն :

Հանգուցեալ Պատրիարքնիս երիտասարդութեանը հայ ժողովուրդը յաճախ յափշտակեց Մասիոնի, Պուրտալուի, Պոսիւէի թեւերուն վրայ թոնելով : Այդ ատենները Ֆրանսերէն գիտցող հայ վարդապետը հազուադիւրս երևոյթ էր — պիտի ըսեմ՝ բարեբաղդաբար, — ու փոխառութեանը ոչ ոք կ'անդրադատար, մանաւանդ որ Բագրատունիին հոյակապ թարգմանութիւնները դեւնոր կը տպագրուէին, եւ գրաբառ ըլլալով ժողովրդականացած չէին :

Ներսէս եպիսկոպոս իր փոխառութեանց եռանդին մէջ երբեմն կը ժողովար թէ միևնոյն վսեմը զաւելտականի կ'ստորնանայ միջավայրի եւ դազաղի փոփոխութեամբ : Հին սերունդի մը յիշատակին մէջ անջնջելի տպաւորուած էր առաջին բառերն այն դամբանականին զոր երիտասարդ Ներսէսը Ճէզայիրլեան ամիրային թաղման օրը խօսած էր : Վարդապետը թասգեղի եկեղեցին իր դամբանականը արտասանելէ առաջ քանի մը ըսուէ տխուր ակնարկ մը կուտայ դազաղին որ իր աչքերուն առջև էր, եւ ահա հանդիսաւորապէս կը ձայնէ «Աստուած միայն մեծ է, եղբարք :» Հիները երբոր այս Պարզ-Վսեմին պատմութիւնը կ'ընէին, չի կրցի խնդալս բռնել. եւ վերջի առեմններս ալ տեղ մը աչքիս զարկաւ այդ դամբանականը : Հայ քարոզիչը Մասիոնէն փոխառութիւն մը

երած էր առանց համեմատութեան օրէնքները յարկ տեսնելու :

Երբ վախճանեցաւ Ֆրանսայի Լուի Ժ-Ի Թագաւորը, «Մեծն-Լուիովիկոս» ճանչցուած, եւ որուն անունովը ատեն սը մկրտուած մնաց Ժ-Է դարը, Մասիոն խօսեցաւ դամբանականը : Պերճախօս քարոզիչը Մեծ-Թագաւորին դազաղին վրայ, խոր լուսութեան մէջ, քանի մը վայրկեան պիշ պիշ նայելէ յետոյ, ձեռքը երկինք բարձրացնելով «Աստուած միայն մեծ է, եղբարք» կը զոչէ, սւ ամբողջ տաճարը կը սարսփի : Բայց, ո՛ր Ֆրանսայի վրայ եօթանասուն տարի իշխող Թագաւորը, ո՛ր սուլթանի մը ստրուկ հայ սարաֆը, որպէս զի Աստուածայ եւ իր միջեւ բազդատութեան եզր մը երևակայել հնարաւոր ըլլայ :

Ամբողջ դամբանականը ս' եւ է տպաւորութիւն չթողուր ընթերցողին վրայ, սրտաբուս շեշտ մը չզարնեմ հիմա մեր սիրտին. բռնազբօսիկ յուզումը ակնեքն է : «Իջէ՛ք հոսանք արտասուեաց, ելէ՛ք հառաչանք եւ հեծե՛ք ծանր Նորին բարեկամ սրտերէն» կը զոչէ քարոզիչը : Թուի թէ քարոզչին գաւազանը յուզարկաւորներուն ապառաժ սրտերէն այդ արտասուցի հոսանքները բղխեցուցեր է, վասն զի ահա քիչ մը ետքը ուրիշ հրաման մը կ'արձակէ «Ուրեմն զաղբեցուցէ սակաւի ինչ ձեր հեծեծանքը, ով բարեկամք ամենասիրելի բարեկամին մերոյ, զաղբեցուցէ՛ք ձեր հառաչանքը որպէս զի կարող ըլլամ ինքզինքս ինծի զէմ զօրացնելով արտասանել Վսեմափայլ Աղաթոնեան Գրիգոր էֆէնսի տապանագիրը :»

Այս ուռուցիկ, անզգայ բացազանչութեանց ջով դըրուած է Օտեանին դամբանականը : Կարդալով զայն, նոյն իսկ երեսուն տարի վերջը, անհնարին է պահ մը տխրութեամբ շհամակել եւ չսիրել այդ Աղաթոնները, այդ Օտեանները որոնք խորհող միտքեր չեղան միայն, այլ խորապէս զգացող սրտեր, ու զժբաղդ հայեր : «Վսեմ» ո՛ր եւ է բացատրութիւն մը շտեսայ Օտեանի խօսքերուն մէջ, բայց ամէն անոնք որ իրենց կեանքին մէջ խորին, անկեղծ, աննախանձ բարեկամութիւններ ունեցած են, Օտեանի ճառը բանաստեղծական զգայնութեամբ անոնց հոգիին կը խօսի : Ու նաև զաւանանք մըն է սկզբունքներու որոնք կ'ապշեցնեն մեզի երբ կը լսուին իսլամ միապետութեան մէջ քրիստոնէայ պետական անձնաւորութեան մը բերնէն, քրիստոնէայ նախարարի մը դազաղին վրայ արտասանուած : «Ոչ ոք, կ'ընէ Օտեան, աւելի դրական կերպով կ'ըմբռնէ ազատութեան յարգն եւ արժէքը՝ քան, տնտեսագէտ մը : Աղաթոն էֆէնսին այս գիտութեան ուսմանը մէջ՝ որ իր կեանքին մեծ մասը ըզբաղեցուցած է, քաղեց իր բոլոր ուժը ազատութեան հաւատալու համար :

«Ինք այն մարդոցմէն չէր որ վերացեալ բանի մը համար կը վառուին. չունէր իր ներսիդին այն անդիմազրե-

լի խանդը որ խորհրդածութենէ առաջ կ'անցնի եւ որ ապացոյց չփնտռէր հաւատալու եւ յարելու համար. իրեն համար ազատութիւնը թուարանական ճշմարտութիւն մըն էր: — Աղաթոն Լֆէնտի պատմութեան իմաստասիրութենէն բազում էր ոչ նուազ նուիրական սկզբունք մը, այն է յառաջդիմութեան սկզբունքը: Մարդկութեան ընթացքը պատմութեան մէջ աճյարիբ եւ աղխագորկ զիպուածոց շարք մը չէ: Մարդկութիւնը վայրենութեան վիճակէն սկսելով միշտ լաւագոյն վիճակի մը զիմած է, և իւրաքանչիւր դար մարդկային յառաջդիմութեան այս մեծ գործողութեան մէջ իր բաժինն ունեցած է: Այս ճշմարտութենէն կը ծագի իւրաքանչիւր մարդու համար պարտականութիւն՝ մարդկութեան յառաջդիմութեանն աշխատելու, առանց հայրենիքի ու ազգի խտրութեան: Սոյն սկզբունքները՝ որոնց երբեք չստեց Աղաթոն Լֆէնտիին կեանքը, զիտցաւ նա վերածել ազգային վարչութեան վերաբերեալ խնդրոց, եւ այս մասին մատուցած ծառայութիւնը չպիտի մոռցուին: Ուրիշ ծառայութիւն մը՝ որ մանաւանդ իր նոր ընդունած պաշտօնէն ինք պիտի կրնար մատուցանել, այն է որ ինք մեծապէս պիտի նպաստէր հայերը օր օրի աւելի ոիրելի և յարգելի ընելու Տէրութեան...»

Սերվիլէնի գաղափարները որոնք ֆրանսերէն արտայայտուած են, համանման են Օտեանի մտածումներուն. ու միևնոյն գգածեալ տրտմութիւնը երևան կուգայ առանց մեծագոյ աղաղակի: «Աղաթոն Լֆէնտին, կ'ըսէ Սերվիլէն, փոխանցութեան ժամանակի մը յարմար հոգին ունէր, այն է գերագոյն աստիճանի շափաւորութեան եւ հաշտասիրութեան հոգին: Աղաթոն Լֆէնտի օրինակ մըն է այն ամէն անձերուն որոնք անկեղծաբար կուզեն յառաջդիմութիւնը պատուաստել մերինին պէս երկրի մը մէջ, ուր յաջողութիւնը շափաւորութեամբ միայն կրնայ ձեռք բերուիլ:»

Օտեան եւ Սերվիլէն, երկուքն ալ իրենց ժամանակին թիւրք իշխանութիւնը ճանչցողներ, ան ատեն կը հաւատային թէ օսմանեան կայսրութիւնը բնաշրջական յառաջդիմութեան ճամբան մտած է. երկուքին համար ալ Աղաթոնի «մինչեւ հիմա քրիստոնէից անմատչելի բարձրացման» հասնիլը ապացոյց մըն է թիւրքիոյ կառավարական բարձրագոյն շրջանակին մէջ գաղափարներու բարեշրջման: Օտեան համոզեալ մտքով մը սուլութեան Ազիզը կ'անուանէ «ճշմարտապէս ազատամիտ վեհագետ մը»:» Եւ սակայն այս համոզումը ունենալէն ետք տարի վերջը միևնոյն Օտեանը այդ միևնոյն վեհագետը տապալողներուն զօրեղ աջակիցը կը հանդիսանար: Ամէնքն ալ կը մոռնային իրենց այդ քաղաքական գաւանանքը թէ թիւրքիոյ պէս երկրի մը մէջ «յաջողութիւնը շափաւորութեամբ միայն կրնայ ձեռք բերուիլ:» Յառաջդիմելու անհամբեր աճապարանքը Համիտեան թրականը բացաւ թիւրքիոյ:

Թէրզեանի և Տէմիրճիպաշեանի բանաստեղծութեանց վրայ երկարիչ չեմ ուզեր: Ներսէս Վարժապետեանի աշխարհաբար արձակ քարոզը երկու երիտասարդներուն գրչին տակ գրարատ ոտանաւորի վերածուած կը գտնենք: Թէրզեան, Միլտոնի եւ ուրիշ գասականներու ազգեցութեան ներքեւ է, եւ առանց քաշուելու կը յայտարարէ թէ.

Ի Սենայ մինչեւ ցԱրաքս
Հծծիւ լալօնք եւ հառաչանք,

Խօսեաց՝ Ստուեր, փայլիս՝ Լուսթիւն
անհետացիր՝ Տարակոյս,

Ուրուականդ արձանացեալ
ընդ տիեզերս և ընդ Աստուած...:

Այս արձակուած հրամաններուն պատճառը չկրցի հասկնալ: Տէմիրճիպաշեան, զեռուսանող Շահնազարկան վարժարանը, կը հաւաստէ թէ

Ամէն ուրեք լալօնից լսին յերկրի
ձայն եւ ողբոց

Ներսէս, Թէրզեան, Տէմիրճիպաշեան զեռ ուրկողչունն կեանքի արեւ արեւակ գարունը, յիշատակ չունին, չեն կրնար տրտմիլ:

* * *

Ժամանակին մտաւորականներուն ոգին ուսումնասիրել ուզողներուն համար շա, Եկան ստուգարան մըն է այդ արձակ թէ ոտանաւոր զամբանախօսներուն մէջ յայտնուած կրօնասէրի, կամ թէ կրօնաւորի, հաւատքը: Ինչորդ զամբանականները, առանց բացառութեան, Աղաթոնի ժամադրութիւն կուտան հանդերձեալ աշխարհը: Բնականաբար խղճի ազատութեան իբր պաշտող մըն է և պարսաւանք կամ դրուատիք չեմ կրնար յայտնել: Բայց զիտելի է որ հիմակ դագաղի մը առջեւ զարգացեալ մտքով աշխարհական մը իր կրօնական համոզումները իրեն վերապահելու պէտքը պիտի զգար: Իբրև է որ հիմակ Աղաթոն մը եթէ վախճանէր, Օտեան մը, Սերվիլէն մը քաղաքական միևնոյն համոզումները յայտնելէ շատ զոյշ պիտի մնային:

Բայց ալ ո՛ր են Աղաթոն, Օտեան, Սերվիլէն: Հին գտր մը փակուած է, վերջացած է:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԲԱՐԻՁԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ԲԱՐԻՁ, 10 սեպտ.

Յուցահանդէսին առթիւ Բարիզ այս ամառ կեդրոնաւորը եղաւ աշխարհի ամէն կողմէն հաւաքուած բիւրաւոր գիտնականներու եւ արուեստագէտներու, որոնք հարիւրաւոր Համաժողովներու բաժնուած՝ մարդկային գործունէութեան ամէն ճիւղերու մասին իրենց մտածումները եւ հետազոտութեանց արդիւնքները փոխանակեցին իրարու հետ, մտաւորական եղբայրակցութեան եւ համերաշխութեան սքանչելի համախմբումներու մէջ:

Ռուսահայ ծանօթ հրապարակագիր եւ գործիչ Պ. Համբարձում Առաքելեան հայ անունին պատուարեք մասնակցութիւն մը ունեցաւ կրօնքներու Պատմութեան Միջազգային Համաժողովին, տիեզերական հռչակ մայելող անուններու քով ունենալով յաջողութիւն մը որ արժանաւոր վարձատրութիւնն էր իր այնքան խղճամիտ եւ ինքնատիպ աշխատութեանը:

Համաժողովը իր յայտագրին մէջ փափաք յայտնած էր որ անգամակիցներէն ջին խօսի Պարսկաստանի մէջ հետզհետէ ծաւալող նոր կրօնքին, Պապիականութեան վրայ: Ճշդիւ ալ, Պ. Առաքելեան տարիներէ ի վեր մասնաւոր ուսումնասիրութիւն մը կ'ընէ այդ կրօնքին մասին, տեղւոյն վրայ հետազոտութիւններ ու քննութիւններ կատարելով, ու կազմելով այսպէս ընդարձակ տեղեկագիր մը, որուն առաւելութիւնն է մասնաւորապէս իր բոլորովին անձնական եւ ինքնատիպ հանգամանքը: Պ. Առաքելեան այդ աշխատութիւնը սահմանած էր Հոմի անցեալ տարուան Արեւելագէտներու ժողովին. Բայց, զանազան պարագաներու բերմունքով, չկարենալով թէհարանէն Հոմ երթալ, արդի Համաժողովին կ'ընդհանրապէս չէր այժմ իր պատրաստած աշխատութեան մէկ շատ շահեկան ամփոփումը, զոր կը ներկայացնենք այստեղ:



Պարսիկները, մահմետական Շիի աղանդին դաւանող, կ'ընդունին թէ Տասներկու Իմամներէն յետոյ գիտութեան եւ ճշմարտութեան Դուռը (Պապ) զոցուած է: Մահմետականութիւնը Պարսկաստանի մէջ ծնունդ տրւած է զանազան աղանդներու, ինչպէս Սուֆիները, Տավուսիները, Տահրիները, Ալ-Ալլահիները: Բայց ասոնց ոչ մէկը այնչափ ծաւալ ու ազդեցութիւն ունեցած է որքան Պապիականութիւնը: Պապիներուն թիւը այսօր 3 միլիոն կը հաշուուի Պարսկաստան (որ ընդամէնը 7 մի-

լիոն բնակիչ կը հաշուէ) (ե 2 միլիոն կովկաս, Անդրկասպ պեան) երկրները, Պախարա, Կեդրոնական Ասիա, Փոքր-Ասիա: Տարակոյս չկայ թէ Պապիութիւնը, որ այսօր զաղտնաբար կը դաւանուի Պարսկաստան, օր մը այդ երկրին ընդհանուր կրօնքը պիտի ըլլայ:

Պապիութիւնը հակազդեցութեան մը, բողոք մը եւ ընդգէմ բարոյական սքրկացնող ճնշումին զօր իջաւ մութիւնը ի գործ դրած է եւ կը դնէ այդ արիական այնչաքան խելացի եւ ճնշողական ցեղին վրայ: Իսլամութիւնն է որ Պարսիկն առաջ է հակամարդկային զաղափարներ, անոր հաւատացուցած է թէ գիտութիւնը եւ ճշմարտութիւնը առ յաւէտ փակուած են մարդոց աչքեւ, թէ պէտք է արհամարհել օտար ազգերը կայն:

Ընդհակառակը, Պապիութեան երկու զխաւոր ըսկըզբունքներն են Ինքնատիպ եւ Իրրիֆաք (միութիւն եւ համերաշխութիւն մարդկային սեռին):

Պապիութիւնը ծնունդ առաւ 1844ին: Հիմնադիրը եղաւ Միրզա-Ալի-Մուհամմէտ, ծնած Շիրազ 1819ին, եւ 1850ին զլիսատուած, հանգուցեալ Նասրէտտին Շաքհին հրամանով: Պապ մականունը տրուեցաւ իրեն, որովհետեւ օր մը երբ Շիի աստուածաբանները, Սէյիդները եւ Իւլէմաները կը պնդէին թէ գիտութեան եւ ճշմարտութեան զղուրդ փակուած է, երիտասարդ Միրզա-Ալին գոչեց. «Ո՛չ, գիտութեան եւ ճշմարտութեան զուրը միշտ բաց է, եւ ես եմ այդ զուրը, այդ Պապը» Այդ օրը, 1844 մայս 12, Պապիութեան յայտնութեան (Չուհուր) օրն եղաւ, եւ Պապիները ամէն տարի կը տօնեն զայն:

Այդ օրէն երիտասարդ Հիմնադիրը ճանչցուեցաւ իբր զուրը որով Աստուած մարդերուն կը յայտնէր բուն գիտութիւնը եւ բուն ճշմարտութիւնը մինչև այն ատեն անտեսուած էին: Պապ 25 տարեկան էր այն ատեն, բոլոր անոնք որ իսլամական կրօնքին լուծին տակ ճնշուած ծարաւ էին Աստուծոյ խօսքը լսելու, Պարսկաստանի ամէն կողմէն գէպի նոր Մահաթին կը վազէին: Շարժումը հետզհետէ կ'ընդարձակուէր ու կը ծաւալէր: Շիի կղերին ազդեցութեանը տակ, Մահաթին Շահը նախադադ միջոցներու դիմեց. Շիրազ զրկեց Թէհրանի մեծ Մուշտէյիտը, շիի նուիրապետութեան զուլսը, հռչակաւոր աստուածաբաններու խումբի մը հետ, որպէս զի հոն կրօնական վիճաբանութիւն մը ունենան Պապի հետ, վստահ ըլլալով թէ առաջին իսկ գումարման մէջ պիտի կրնան ժողովրդին ապացուցանել թէ Պապ կեղծ Մահաթի մըն էր, խաբեքայ մը, դրուժան մը իսլամի սուրբ վարդապետութեանց, եւ թէ քարկոծուելու միայն արժանի էր: Բայց ինչ մեծ եղաւ ամէնքն զարմանքը երբ Մուշտէյիտը յարտարարեց մէկ երկու գումարումէ յետոյ թէ Պապ բուն Մահաթին էր եւ թէ յատկապէս Աստուծոյ քովէն զրկուած էր ճշմարտութիւնը քարոզելու: Մուշտէյիտը հրաժարեցաւ իր պաշտօնէն, եւ սկսաւ Պարսկաստանի ամէն կողմը

պտըտիլ և Պապի պատուերները քարոզել:

Գայթակղութիւնը մեծ եղաւ Իսլամներուն մէջ և հալածանքը սկսաւ, բայց, փոխանակ կասեցնելու նոր սկսող շարժումը, աւելի տարածուած տուաւ անոր: Ամէնէն նշանաւոր զէպքը, որ խոր տպաւորութիւն առաջ բերաւ Պարսկաստանի մէջ, կրօնական մեծ քաղաքին՝ Քազվինի հոշակաւոր Մուշտէյիտին աղջկան դարձը եղաւ: Մանկամարդ զիւցազնուհին, Բուրրաթ-էլ-Այն (աչքի լոյս) մականուանեալ, առաջին Պարսիկ կինը եղաւ որ ըմբոստացաւ իսլամութեան լուծին դէմ: Քօղը մէկզի նետեց, հասարակութեան առջև երեցաւ երեսուբայց, և Պապիութեան յարած՝ էրիկմարդուն ու կնոջ հասարակութիւնը քարոզեց: Իր ոտանաւորները եւ երգերը, որոնք զրական ճշմարիտ զեղեցկութիւն մը ունին, մինչև այսօր հիացմամբ կը կարդացուին ու կ'երգուին: Իր պերճախօսութիւնը եւ անբաւ խանդը նոր կրօնքին բերին բերաւոր հետեւորդներ: Բուրրաթ-էլ-Այն բանտ դրուեցաւ Թէհրան, և 1852ին, Պապիներուն զէմ ելած մեծ հալածանքին ատեն, Նասրէտտին Շահին օրով, զխատուեցաւ եւ մարմինը հոր մը նետուեցաւ:

Որովհետև շարժումը երթալով կը ծաւալէր եւ վերտանգաւոր կերպարանք մը կ'առնէր, կառավարութիւնը ձերբակալել տուաւ Պապը և Դարէժ զրկեց, միջնաբերդին բանտը, ուր տնօրէնը, պահապանները քիչ ետքը Պապիութեան յարեցան: Պապ այն ատեն Մաքու Ղըրկուեցաւ, ուսկից սակայն անդադար կը թղթակցէր իր աշակերտներուն հետ: Բանտին մէջ է որ զրեց իր սրբբազան գրեքը:

Պապի բանտարկութիւնը զայրացուց իր հետեւորդները, որոնք Պարսկաստանի ամէն կողմերէն խմբովին բանտը կ'երթային զանի տեսնելու: Խռովութիւններ ծագեցան ամէն կողմ, արիւնը սկսաւ հեղուլ. զօրքերուն և նորազանգներուն միջև ամէն կողմ ընդհարումները տեղի կունենային, եւ հազարաւորներ սպաննուեցան: Ի վերջոյ, կառավարութիւնը հրաման տուաւ սպաննելու Պապը, որ 1850 յունիս 27ին զխատուեցաւ Դարէժ:

Իր մահը՝ նոր մղում մը տուաւ իր վարդապետութեանը: Կատաղի ու անխնայ հալածանք մը սկսաւ այն ատեն Պապիներուն դէմ, և Նասրէտտին Շահ արեան մէջ խեղդել ուզեց շարժումը, ու չյաջողեցաւ: Իր իշխանութեան վերջին տարիները միայն, Ռուսիոյ և Անգլիոյ զեսպաններուն խորհրդով, զազրեցուց հալածանքը: Արդի Շահը իր հօրը օրինակին չի հետևիր. Ու Պապիութիւնը, թէպէտ պաշտօնապէս արգիլուած, լռելեայն թոյլատրուած է:

Պապի մահէն յետոյ, իր յաջորդը ձանձուցուեցաւ իր աշակերտ Պէհա, մինչ ուրիշներ ասոր փոքր եղբայրը Էզալ ուզեցին իրենց գլուխ ճանչնալ: Յաղթանակը սակայն Պէհայի մնաց, ու այսօր բոլոր Պապիները զինքը կը դաւանին պապի յաջորդ, մինչ Էզալիներուն թիւը հազիւ

10,000ի կը հասնի: Պէհա մեծ հալածանքին ատեն Պաղտատ ապաստանեցաւ և օսմանեան կառավարութեան ձեռքով Աքեայի բանտը դրուեցաւ, ուր մահաւ 1892ին, իրեն յաջորդ թողլով իր որդին Ապպաս Էֆէնտի, որ այսօր Պապիներուն միակ պետն է: Էզալ ևս թիրք կառավարութեան՝ ձեռքով կիպրոս աքսորուեցաւ, ուր մինչև այսօր կ'ապրի Ֆամակուսթա, իր բոլոր յաւակնութիւններէն հրաժարած:

* * *

Տեսնենք այժմ Պապիութեան վարդապետութիւնները:

Պապ բոլորովին չկրցաւ զերժանիլ իսլամութեան աւանդութիւններէն. իրօք, ինք կը ձգտէր ոչ թէ նոր կրօնք մը գնելու իսլամութեան տեղ, այլ պարզապէս զայն բարեկարգելու: Բայց իր յաջորդը, Պէհա, ճշմարիտ յեղափոխութիւն մը կատարեց, իսլամութեան հիմունքը կործանելով: Պապիութիւնը օժտեց համամարդկային ու ազատական ոգիով մը: Ինք կը նկրտէր պապիութիւնը փոխել այնպէս որ բոլոր կրօնքներուն բնաշըջումը ըլլայ. եթէ իր այս առաջադրութեան մէջ բոլորովին չյաջողեցաւ, այսուհանդերձ իր քարոզած վարդապետութիւնը ամէնէն այլատիրական է:

Պէհայի գրած սրբազան գրեքերուն համաձայն, մարդկային միութիւնն ու համերաշխութիւնը մեծագոյն բարիքն է: Պապիութեան նպատակն է սրտերու տիրապետութիւնը. հետեւաբար ի բաց կը վանէ ամէն երկրակալութիւն: Ամէն մարդիկ եղբայր ու հաւասար են. ո՛չ մեծ կայ, ո՛չ պզտիկ, ո՛չ ազնուական, ո՛չ ուսմիկ: Ամէն մարդիկ զաւակներն են նոյն մեծ հայրենիքին, Երկրին. մասնաւոր հայրենիք չկայ: Ամէն ազգ ազէկ է Աստուծոյ առջև, ընտրեալ ազգ, ընտրեալ ժողովուրդ չկայ: Մարդկային բոլոր ցեղերը, ճերմակ, սեւ, դեղին, հաւասար են: Կինը պէտք է յարգել. իր իրաւունքները ունի. ամուսնութիւն պէտք չէ ըլլայ առանց փոխադարձ հաւանութեան: Պապիութիւնը միակնութիւն կը պատուիրէ. երկրորդ կին մը այն ատեն միայն կը թոյլատրէ, երբոր առաջինը ամուլ է, առանց սակայն այդ առաջինը վտանգելու: Հարձ պահելը արգիլուած է: Երբոր էրիկը ճամբորդել ուզէ, պէտք է կնոջը հաւանութիւնը առնէ. եթէ ոչ կինը, ինք ամիս սպասել յետոյ, կրնայ ուրիշ մարդու մը հետ ամուսնանալ: Ապահարզան տեղի կունենայ երբ ամուսինը անհաւատարիմ գտնուի: Կինը կրնայ անձնական ստացուածք ունենալ: Ժառանգութեան յատուկ ձեւ մը որոշուած է. ի չգոյէ որոշուած ժառանգորդին, անոր բաժինը կ'երթայ Արդարութեան Տան, որ հասարակութեան գործերը կը նայի, դատ կը տեսնէ, որբերը և աղքատ տղաքը կը կրթէ եւայլն:

Պէհայի պատուերին համաձայն, որ կ'ըսէ. «Զեզի համար հայրենիք չկայ, ամբողջ տիեզերքը ձեր հայրենիքն է»:

նիքն է, քանի որ նոյն ծառին պտուղներն ու ծիւղերն էք», պապիներու եւ ուրիշ ազգութիւններու միջեւ ամուսնութիւնը ներելի է: Գերութիւնը եւ գերեմաճառը խոտիւ արգիլուած են: Գիտութեանց եւ օտար լեզուներու ուսումը անհրաժեշտ ճանչցուած է: Ճակատագրի հաւատքը չկայ այնպէս ինչպէս կ'ըմբռնեն իսլամները. ինչ որ բնութեան օրէնքներուն ենթակայ է, կարելի չէ փոխել. բայց իր գործերուն, իր գոյութեան մէջ, մարդ միշտ պէտք է առաջ երթայ դէպի լոյսը եւ ճշմարտութիւնը:

Պապին պարտաւոր է իր բնական իւրաքանչիւր երկրին օրէնքը յարգել եւ անոր հպատակել: Կառավարութեան ձեւերէն, պապութիւնը կը պատուիրէ հանրապետութիւնը, կամ ուրիշ ձեւ մը որուն մէջ ամէնքն ալ միենոյն իրաւունքները եւ միենոյն պարտքերը ունենան: Ամէն մարդ պարտի աշխատել. բայց անկարները, աղքատները պէտք է խնամուին հասարակութենէն, եւ ասոր համար ամէն Պապի բաժին մը տալու է:

Պատերազմը, նոյն իսկ հաւատքի համար պատերազմը (Ճիհատ), ջնջուած է, ու Պէհա կը պատուիրէ ազգերու միջեւ վէճերը կարգադրել իրաւաբարներու ատեանով մը:

Ասոնք են համառօտիւ պապութեան պատուէրները՝ ընկերական կեանքին համար: Գալով բարոյական կեանքին, կ'արդիւլ տուտ խօսիլը, շողոքորթութիւնը, ճգնաւորութիւնը, ամուրիութիւնը կային:

Պապութիւնը շընդունիր ո՛չ խոստովանանք, ո՛չ մկրտութիւն, ո՛չ սուրբերու միջնորդութիւն: Թշփատուով կը կատարուի՝ նախ առողջապահական տեսակէտով, յետոյ գերմ մնալու համար միւսիւլմաններուն հալածանքէն: Աղօթքը հարկաւոր է, բայց անհրաժեշտ չէ ամէն օր. պապիները կը հաւաքուին տան մը մէջ, կը նստին եւ բարձրաձայն կարճ աղօթք մը կ'ընեն, որմէ յետոյ կրօնական երգեր կ'երգեն եւ պապի կամ պէհայի պատուէրները կը կարդան: Ահաւասիկ գլխաւոր աղօթքը. «Կը դաւանիմ, ո՛վ Աստուած, որ դուն ինձի յայտնեցիր ճշմարտութեան արեւը. կը վկայեմ թէ անկից գուրս ուրիշ ճշմարտութիւն չկայ. կը դաւանիմ թէ ոչ ոք կըրնայ քեզ դրուատել, ո՛չ ալ քեզ երեւակայել: Ո՛վ իմ Աստուածս, մի՛ մերժեր մարդը որուն յոյսը քու ծոցիդ կը կառչի:»

Պապիները կ'ընդունին երեք մարգարէները, Մովսէս, Յիսուս եւ Մուհամմէտ: Ուխտագնացութիւնը, մեռելներուն համար աղօթքը աւելորդ կընկատուին, եւ պէհա կը յանձնարարէ Արդարութեան Տան տալ ուխտագնացութեան սահմանուած դրամը: Տարուան մէջ 19 օր միայն պարտաւորիչ ծով կայ: պապիները կը հաւատան ապագայ կեանքին եւ յաւիտենականութեան, բայց չեն ընդունիր արքայութեան եւ դժոխքի գոյութիւնը: Ամէն մարդ իր վարձքը՝ կամ պատիժը՝ պիտի խտանայ իր

գործերուն համեմատ, բայց մարդուն տրուած չէ գիտնալ թէ ի՞նչ եղանակով:

Աս է ահա կրօնքը որ ամբողջ պարօկաստանը յեղաշրջելու կոչուած է, եւ որուն համամարդկային եւ ազատական ձգտումները այնքան կը տարբերին իսլամական կրօնքէն: Պապութիւնը շատ աւելի կը յարմարի արիական պարսիկներուն բնութեանը եւ ընդունակութեանցը քան իսլամութիւնը, եւ թերեւս այդ ցեղին վերածնութիւնը ապահովէ:

* *

Այս բանախօսութեան յաջողութիւնը շատ մեծ եղաւ Համաժողովին մէջ: Նիւթին շահեկանութիւնը, հաւաքուած տեղեկութեանց ստուգութիւնը, նորութիւնը եւ գիտական դաստորուածը ներկայ մեծանուն գիտնականներուն գնահատուած վայելեցին եւ ծափահարութեամբ ընդունուեցան:

Համաժողովին փակումէն յետոյ, բոլոր անդամները հացկերոյթի սեղանի մը շուրջը հաւաքուած էին՝ Էֆէլի Աշտարակին մեծ ճաշարանին մէջ: Մէկ քանի բաժակաճառերէ յետոյ, պ. Համբարձում Առաքելեանէ ալ խընդրուեցաւ խօսիլ, ու մեր պաշտօնակիցը բնականաբար խօսեցաւ մեր դժբաղդ հայրենիքին վրայ: Ըսաւ թէ ցեղական կամ կրօնական ատելութիւն չունինք մենք մեզ ճնշող իսլամ տարբերուն դէմ, եւ ուրախութեամբ պիտի ողջունենք այն օրը ուր թիւրքերը մեր եղբայրակիցները ըլլան՝ ու մեզի հետ ձեռք ձեռքի, մարդկային համերաշխութեան սրբազան կապերովը միացած, ընթանան դէպի մարդկութեան գերագոյն նպատակները: Դժբաղդաբար հեռու է այդ օրը, ու Հայերը միշտ կը տառապին թիւրքին կրօնամոլ այլամբժութեան ու ցեղական թշնամութեան կրքերուն շղթայազերծումէն: Սպասելով ուրեմն ապագայ այգերուն որ երկրագնդի այդ վաղնջուց անկիւնին վրայ ցեղերու եղբայրակցութիւնը պիտի ողջունեն, իրաւունքին ու արդարութեան բոլոր բարեկամներուն պարտքն է ամէն տեղ իրենց ձայնը բարձրացնել որպէս զի Հայերուն միջոց տրուի ազատօրէն ապրելու իբր մարդ եւ քաղաքակրթութեան գործիքները ըլլալու ասիական այդ սահմանազրկին վրայ:

«Կեցցէ՛ Հայաստան» օրտագին ազազակով մըն է որ ընդունուեցաւ այս մաղթանքը, ու զայն ամէնէն աւելի եռանդով արձակազններուն մէջ յայտնի կ'ըլլային ճաբոնցի ու Չինացի երկու գիտնական:

Հանդէսին նախագահ Պ. Կուպէրնազիս, իտալացի մեծահոգակ գիտնականը, ինք պատասխանեց Պ. Առաքելեանի: Ըսաւ թէ ազգ մը որ ցեղերու եղբայրութեան մասին այդպիսի գաղափարներ ունի, որ իր մէջը ժողովուրդներու համերաշխութեան մասին այդպիսի իտէալներ կը սնուցանէ, այդ ցեղը չմեռնիր. ապագան իրն է: Բայց

պէտք է իր ներկային ալ խորհիլ. ու իրեն պարտք կը հա-
մարէր խնդրել ներկայ բոլոր ժողովականներէն որ իւ-
րաքանչիւրը իր գործունէութեան շրջանակին մէջ ամէն
առիթէ օգտուի հայկական դատին համար աշխատելու և
հայկական տառապանքին բարձուը խնդրելու բարձ-
րաձայն:

Պ. Առաքելեանի աշխատութիւնը, ընդլայնուած ու
ամբողջ համաժողովին խնդրանքին համաձայն պիտի
հրատարակուի ֆրանսերէն լեզուով, ու պիտի մնայ իբր
ամէնէն կաաարեալ նպաստը Պապիութեան ուսումնա-
սիրութեան:



Բացի յիշեալ համաժողովէն, պ. Առաքելեան մաս-
նակցեցաւ Ազգադրական Գիտութեանց Համաժողովին,
որուն մէջ կարգաց ուսումնասիրութիւն մը կողմակաւ Բո-
լանի ֆիւրտերուն և պարսկաստանի ֆիւրտերուն մասին
(ուսումնասիրութիւն որուն մասին ժօտերս ընդարձակօրէն
պիտի խօսինք Նոր Կեանքի մէջ): պատուոյ անդամ էր
նաև Ժողովրդական կրթութեան աշխարհական ընկե-
րութեանց միջազգային Համաժողովին, իբր պարսկա-
հայոց կրթական կեդրոնական Յանձնաժողովին ան-
դամ, ու կ'իմանանք թէ պիտի մասնակցի նաև Խաղա-
ղութեան միջազգային Համաժողովին որուն միանգամայն
գեկուցում մը պիտի ընէ:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Կ. պոլիս նորէն կը յուզի: Թէև ո՛չ գնտակ մը արձակ-
ուեցաւ, ո՛չ ալ պուտ մը արիւն կաթեցաւ բայց հայ ու
թիւրք, պատրիարքարանու Երևազ, սոսկական ու պաշ-
տօնատար տակնուվրայ են: Մեր տեղեկութեանց բաժ-
նին մէջ կ'ամփոփենք Եւրոպա հասած լուրերը որոնք
մեր այս տեսութեան կ'առաջնորդեն:

Արզուեանի ձերբակալուը քաղաքական կարե-
ւոր գէպքի մը համեմատութիւնները առած է: Այդ երի-
տասարդը թէև մեծահոշակ համբաւի չէ տիրացած,
բայց յարգուած ու սիրուած է թէ՛ հայ և թէ՛ հայասէր
Եւրոպացիներու մասնաւոր շրջանակներու մէջ: Նոյն ինքն
օսմանեան իշխանութեանը երկար ատենէ ի վեր ըմբռնած
էր Արզուեանի կարեւորութիւնը:

Նոյն այդ կարեւորութիւնն է որ հայկական դատին
նպաստամատոյց նկատուելով, Կ. պոլիս թէ վարչապետ
Արթին փաշա եւ թէ Երևազը ջանադիր են Ար-

զուեանի առաքելութեան բնույթը այլափոխել Եւրոպայի
առջեւ:

Արզուեանի ծրագիրներուն վերաբերութեամբ զի-
տակցօրէն խօսելու ձեռնհասութիւնը ունենալ թէև կը
կարծենք, բայց առ այժմ պիտի բաւականանանք ըսելով
թէ այդ երիտասարդը ո՛չ իբր «տերօր» մը, ո՛չ ալ իբր,
ըստ Պոլսոյ պաշտօնական բացատրութեան, «խոռվարար»
մը մտած է Կ. պոլիս: Արզուեան որքան կորովալիր եւ
յանդուգն ճանչցուած է, այնքան ալ լրջախոհ և քաղա-
քագէտ մտքի մը համբաւը կը վայելէ իր ծանօթներուն
մէջ. ուստի իր ներկայութիւնը Կ. պոլիս ո՛ր և է անդէպ
ձեռնարկներու նախազեկոյց յայտարարութիւն մը պէտք
չէ նկատել, մանաւանդ որ իր քաղաքական բարեկամ-
ներն ալ իրեն պէս շրջահայեաց եւ հեռատես ուղղու-
թեան հետեւող են:

Ինչ պաշտօնով ալ որ Արզուեան Կ. պոլիս գացած
ըլլայ, իր յանկարծական երևումովը շփոթութեան մատ-
նած է Տատեան վարչապետը: Հայ ազգին այս բարձրա-
գոյն պաշտօնատարին հոգեկան ու մտաւորական տապ-
նապը ըմբռնել տալու համար, անցեալին վրայ յետադարձ
ակնարկ մը պէտք է:

Երբ չորս տարի առաջ այս ատեններս վերոյիշեալ
Արթին փաշա ստանձնեց Թիւրքիոյ Հայոց Ազգային
վարչութեան պաշտօնը, որ արդէն սովորական ժամա-
նակները դժուարալոյս խոչնդոտներով շրջապատեալ
է, իսկ այդ արիւնաթաթախ թուականին տարօրինակ
ծանրութեամբ պիտի ճնշէր իր ներքև մտնողը, ազգը այդ
հայուն վրայ պետական մարդու յատկութիւններէն մի
քանին նշմարել կարծեց:

Իր կողմէն Եւրոպա պատուիրակութեան մը ժամա-
նումը ենթադրել կուտար թէ Հայոց կեդրոնական վար-
չապետը ազգին բոլոր ուժերուն աջակցութեամբ կուզէր
հետամտիլ հայոց վիճակին բարւոքման խորհուրդներուն
յաջողութեանը: Ազգին նիւթական ուժը որքան որ ալ
շափաւոր, կրնար սակայն ազգեցիկ զօրութեամբ ներ-
գործել պատրիարքարանին հեղինակութիւնը բարձրա-
ցնելու: Արթին փաշա այդ նպաստաւոր հանգաման-
քէն օգտուելու հակամէտ կ'ենթադրուէր, բայց շատ
չանցած զգացինք թէ վարչապետ Տատեան փաշա, ան-
շուշտ ունէն համեմատութիւնները պահպանելով, որ Գա-
վուրի մը օրինակին հետեւող կը ներկայանար, ընդհա-
կանակը՝ առիական խորամանկութեան մը անձուկ շըր-
ջանակէն դուրս ելլել չէր մտաբերած: Ազգին նիւթական
զօրութեան չէզոքացումը առաջադրած էր, եւ այս նը-
պատակին յաջողութեանը համար ժամանակ շահելու
պէտքը զգացած էր, անտի Եւրոպա պատուիրակութեան
մը առաքումին գաղափարը:

Տատեան փաշա իր ծրագիրը յաջողցուց, կամ յա-
ջողցուցած չէ կարծեց: Ազգային ուժին մէկ մասը, որուն
որակին վրայ խօսիլ մեր նիւթէն դուրս է, գիւրութեամբ

գրպանեց, ինչպէս կը հաւաստեն մասնաւոր տեղեկութիւններէ զատ, նաև կարգ մը հայ եւ ֆրանսերէն հրատարակութիւններ, ու իրողութիւնները, կամ թէ՛ ցիւրղոսփառները: Իսկ միւս մասը որ Տատեանի հրատարակութեանց գիրամատչելի չէր թուեր, զայն մահացնելու նկրտեցաւ: Վատահամբաւութեան կարգ մը հրատարակութիւններ, որոնց մէջ Արթին փաշայի նեխաշաղիղ ներշնչումը կը հոտէր, իբր գերեզմանական կափարիչի մը տապանագիրը կարգացուեցաւ սուլթանին: Ազգին վարչապետը ապահովեց իր տէրը թէ Հայոց զօրութեան մէկ մասը իր գրպանին մէջն է, միւսը՝ հողին տակ: Երկուքը Եւրոպայէն, գոնէ առժամաբար, ապահով կը մնար. ու Հայ ուժէ մըն ալ ինքզինքը անջոյթ համարելով շնորհիւ Խարիճիկի Միւսթէշարին, անողորբելի կամակորութեամբ հետամտեցաւ կէտ առ կէտ գործադրել հակահայկական ծրագիրը: Պետական հայ անձնաւորութիւնը որ կեանքին մեծ մասը զրամական ահռելի տագնապի մը մէջ մաշեցուցած էր, հիմակ չորս տարի է հազար բարիով առիտ, իր ծերութեան օրերը յղփացած հանգստութեամբ անցընելու բաղաւորութիւնը կը վայելէր:

Այս երանաւէտ կենցաղավարութեան պահուն Պ. Արզուեանի Կ. Պոլիս յարկարծական երևումը էն մեծ վտանգն է որ Տատեանի երջանկութեանը կ'սպառնայ: Արզուեան կենդանի վկայութիւն մըն է թէ Հայոց վարչապետը սուլթանը խաբած էր, երբ անոր կը հաւաստէր թէ Հայոց Ազգային զօրութիւնը այլ եւս մեռած է:

Արզուեանի խորհուրդները զեռ անձանօթ պիտի մնան. անոնց բնոյթը ինչ որ ալ ըլլայ, ճշմարտութիւն մը ակներև հաստատուած է: Ազգային Զօրութիւնը մեռած չէ, ինչպէս սպտրիարք եւ վարչապետ կը սիրէին հաւտալ: Գաղափարի հեղինակաւոր ներկայացուցիչ մը կարող է, հազարաչեայ ոստիկանութեան մը արթնութիւնը պատրելով, արտասահմանէն մտնել թիւրքիոյ մայրաքաղաքը, որ տարօրինակ հսկողութեան ներքէ է: Եւ անշուշտ այդ անձնաւորութիւնը քիչֆ ընելու համար չէ որ ծանրածանր վտանգներու կը մատնէ իր կեանքը: Տատեան վարչապետին ինքնայօժար պատրանքը փարատուած է, ու հիմակ անձանօթին հանդէպ կը գտնէ ինքզինքը:

ԹՈՒԹՈՒԵԼՈՒ ԼՈՒԾ ՄԸ

Անգլիական թերթերը « Հայոց պատրիարքը հրատարակելով կ'սպառնայ » վերնագրին ներքեւ հետևեալ հեռագիրը կը հրատարակեն.

« Ոստիկանութեան նախարարը Հայոց արգիլած ըլլալով Գում-Գարուի Մայր Եկեղեցին հաւաքուիլ, պատրիարքը Մեծ-Եպարգոսին ուժգնապէս բողոքեց ոստիկանութեան նախարարին այս բռնութեանը դէմ, յայտարարելով որ այսպիսի պայմաններու մէջ պիտի պարտաւորուի հրաժարիլ: պատրիարքը միանգամայն կրկնեց իր բողոքը թիւրքիոյ մէջ Հայոց նոր ձեռքակալութիւններուն համար: »

Այդ արգելքը հաւանօրէն տնօրինուած է Խաչի Տօնին առթիւ. կառավարութիւնը վախնալով որ սեպտեմբեր 18ի հինգերորդ տարեդարձին գուցէ թափօր մը նորէն Մայր-Եկեղեցիէն դէպի պապը-Ալին ճամբայ իյնայ: Երկուքը թէեւ անհիմն, բայց նաև ապացոյց մըն ալ է մտքի այն տաքնապին որմէն հայ ու թիւրք միանգամայն կը տանջուին: Վերջին գէպքերը մայրաքաղաքը անգամ մը եւս Անձանօթին առջեւ կը նետեն: « Վաղը ինչ պիտի պատահի արգեօք » կը հարցնէ հայն ալ, թիւրքն ալ, եւրոպացին ալ:

Մենք կանգ չենք առնել այս կասկածներուն և վախերուն առջեւ, ու շիտակ անցնինք պատրիարքին հրաժարման սպառնալիքին, սպառնալիք որ քառամեայ զրութեան մը շարունակութիւնը կը գուժէ: Եւ սակայն այդ զրութիւնը ջնջելու ժամանակը հասած է, և անցած իսկ: Խաղալու, խաղցնելու թուականին փակման ժամը զարկած է: Որոշ, կտրուկ քաղաքականութեան մը հարկը իբր անխուսափելի պարտականութիւն կը ծանրանայ Հայոց պատրիարքին վրայ: Թեքեւս նոր կացութիւն մը ստեղծուի. պատրիարքը կարող է նոր շրջանի մը սկզբը նաւորութեանը օգտակարապէս աջակցիլ. աջակցութիւն մը որուն փոխարինութիւնը ազգին կողմէն պիտի հատուցուի պատրիարքին:

Հայ ազգը արտակարգ պահանջումներով իր պատրիարքը խռովելու հետամուտ չէ: Առանց տարակուսանքի ամէնքս ալ ընդունած ենք թէ Կ. պոլսոյ առումէն ի վեր երբեք Հայոց պատրիարք մը չէր մատնուած այնպիսի ծանր կացութեան մը որուն մէջ կը տագնապի Օրմանեան պատրիարքը: Բայց նաև ընդունելու է թէ, կոչումը զոր 1896ին հայ ազգը ուղեց Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսին որպէս զի իր միտքն ու սիրտը նուիրէ առիւնի մէջ կտոր կտոր գալարող ժողովրդի մը փրկութեանը, մեծագոյն փառքն էր որ Պոլսոյ առումէն ի վեր հայ

եկեղեցականի մը ընծայուած ըլլար: Մեր պատմութիւնը, տասնըհինգ դարերու արիւնի եւ կոտորածի զանգուած մը թէև, բայց անցեալին էն ահարկու թուականը իսկ կը պատկինայ 1895-96ի քով: Մովսէս, բաղդատմամբ 1896ի Հայոց պատրիարքին, աւելին պատուաւոր պայմաններու մէջ կը գտնուէր: Այլ է ժողովուրդ մը փարաւոնի ձեռքէն փախցնել, այլ է՝ փարաւոնը մարգացնել: Ու Պատրիարքը Եկեղեցի մը իրեն կոնակ չունէր. կամ աւելի գէշը՝ Եկեղեցի, Եւրոպայի դէմքին տակ, մատնած էր իր ժողովուրդը և թշնամիին ճամբարը անցած էր:

Օրմանեան եպիսկոպոս ահեղ իրականութիւնը աչքերուն առջև ունենալով, ամենակատարեալ գիտակցութեամբ էր որ սիրայօժար ընդունեց իրեն եղած ազգային հրաւերը: Այդ օրէն ի վեր ահա չորս տարին կը լրանայ, և հիմա ինքն իր խղճին կրնայ հարցնել — ի՞նչ ըրի ես իմ ազգիս:

Ինչ ըրա՛ւ.

Մայր-Եկեղեցին ուրկէ Մաղաքիա եպիսկոպոսը պատրիարք դուրս ելած էր, Մայր-Եկեղեցին որ պատրիարքական հոկոյութեան ներքև է իբր Աթոռանիստ տաճար, այդ Մայր-Տաճարին դռները հաւատացեալ հայ ժողովուրդը այսօր իր առջև փակ կը տեսնէ իսլամ ոստիկանին ձեռքով, պատրիարքին աչքերուն տակ. ուրիշ պատրիարքի մը օրով իսլամ իշխանութիւնը կ. պոլիս համարձակմ'ձ էր այսօրինակ սրբապղծութիւն գործելու:

Ինչ ըրա՛ւ.

Բանտերը, բերդաքաղաքները, աքսորավայրերը լեփ լեցուն գտաւ հայերով, ու այդ տառապելիներուն թիւը օրէ օր աճելով կ'աճի:

Ինչ ըրա՛ւ.

Նախճիրներու յիշատակարանները ստուարացան ու կ'ստուարանան, մինչեւ Սպաղանք:

Ինչ ըրա՛ւ.

Ամէն հայ քաղաք, ամէն հայ գեղ զընտան մըն է ուր հայը բանտուած մնալու բռնադատեալ է:

Ինչ ըրա՛ւ.

Յարածուն հարկերը, բռնագատ հաւատափոխութիւնները, տառապանքներու սաստկացումը, ազգին ամէն իրաւունքներուն բռնաբարումը, Հայոց համար ամէն օրէնքի դադարում, այս ամէնը անհունապէս կըրնան երկարաձգել « ինչ ըրա՛ւ » ներու անհատնում շարքը:

Ազգին պարզեւ տրուած այս լիաշնորհ բարիքներուն փոխարէն Պատրիարքը ի՞նչ տրիտուր օսմանեան գահուն ոտքին ներքև դրաւ: Գոնէ Յեղափոխութեան դիմ'կը: — Պոլսոյ նորանոր դէպքերը, ահագն սթիւ ձերբակալութիւնները կը պատասխանեն այս հարցումին:

Թո՛ղ ուրեմն Օրմանեան պատրիարք ինքնիրեն հարցընէ թէ « ի՞նչպէս փոխարինեցի իմ ազգիս իմ վրաս ունեցած հաւատքը: » Թո՛ղ հարցնէ նաև, եթէ կուզէ,

« իրական ի՞նչ ծառայութիւն մատուցի օսմանեան իշխանութեան: » Մենք « ի՞նչ ըրաւ » էն կ'անցնենք « ինչո՞ւ » ին:



Օրմանեան պատրիարք պարագաներուն պահանջած բարձրութեանը համբաւնալու անկարող գտնուեցաւ, ու կը գտնուի: Անոնք որ Բաղաքական ժողովականի հանգամանքովին Հայոց Պատրիարքը պատած պաշարած են, անոնք իրենց շահերուն անու լուծին տակ ճնշած կը պահեն թիւրքիոյ Հայոց առաջին պաշտօնատարը: Անտարակոյս պատրիարքը անձնապէս պատասխանատու չէ եթէ Ազգային ժողովը անոր չորս կողմը փաշաներով, էֆէնտիներով լեցուց: Քիչ կամ շատ ճշմարտութեամբ ըսուած է թէ, խելօք մը երբ քառսուն օր խեղդերու մէջ մնայ ինքն ալ կը խեղդենայ: Անտեղի չէ կարծել թէ Պատրիարք մըն ալ երբ շարունակ փաշաներու եւ էֆէնտիներու մէջ կը մնայ, ինքն ալ քիչ թէ շատ կը փաշայանայ, կ'էֆէնտիանայ: Բայց ժամանակն է, եթէ անցած չէ արդէն, որ սթափի: Տատեան եւ ընկերութեան լուծը իր վրայէն թոթուելով է որ Հայոց պատրիարքը պիտի կրնայ ազգին առաջնորդը հանդիսանալ այս ամենամանր հանգամանքներուն մէջ:

Չորս տարի է որ Սահմանադրութիւնը իրապէս դադարած է: Պատրիարքի մը պաշտօնավարութեանը համար սահմանադրութիւնը տարիներու շրջան մը չէ գծած: Գում-Գարուի Աթոռը բազմողը մինչեւ մահը հոն մնալու իրաւունքը կը վայելէ, սակայն ժողովականները երկու տարուան շրջանի մը բոլորումէն յետոյ պարտաւոր են հրաժարիլ: Այդ շրջանը երկրորդ անգամ մը եւս բոլորեցաւ, ու Տատեան եւ պաշտօնակիցները ապօրէն ժողովականներ են: Պատրիարքը ազատ է անոնց լուծը թօթափել,

Որքան ատեն որ Պատրիարքը իրեն Տատեան փաշան առաջնորդ ունենայ, միշտ ազգին վնասակար պաշտօնեայ մը պիտի ներկայանայ. ու նաև, ըսենք ճշմարտութիւնը, օսմանեան իշխանութեան ալ վնասակար: Չորս տարուան պատմութիւնը անհերքելի ապացոյց մըն է մեր հաւաստումներուն: Չորս տարուան մէջ ո՛չ օսմանեան իշխանութիւնը զինաթափ եղաւ, ո՛չ հայ Յեղափոխութիւնը: Բաղաքային պատերազմը կը շարունակուի, աղիտաբեր հետեւանքներով որոնցմէ օտարները կ'ապահովեն իրենց շահերը:

Ներսէս պատրիարքին վախճանումէն յետոյ Հայոց չորս պատրիարքներէն երեքը ազգին ատելի եղան միայն եւ միմիայն էֆէնտիներուն իրենց հպատակութեամբ: Նուրեանը՝ Վեհապետեան Յարութիւն պատրիարքին խելքը գլխէն առաւ. Սիմոն պէյ՝ Ալըգեան Խորէն պատրիարքը բարոյապէս ու մարմնապէս սպաննեց, Տատեան փաշա՝ Օրմանեանը վարկաբեկ ըրաւ վար ձգեց: Իսկ

այօրեան չարիքի փոխարէն այդ «քաղաքագէտները» օտմանեան տէրութեան ինչ շահեցուցին:

Ալըզեան Խորէն Պատրիարք 1888-90ի վարչութեան օրով ազգէն կը սիրուէր ու կը յարգուէր, վասն զի քաղաքական ժողովը էֆէնտիի մը իշխանութեան ներքեւ ճնշուած չէր: Անկուժը սկսաւ Սիմոն պէյին օրով:

Ալըզեան Պատրիարքը երբեմն լուսաւոր մտքով կը դիտէր ընդհանուր կացութիւնը, եւ օր մը Սիմոն պէյին կ'ըսէր.

—Քիչ մըն ալ մեզի եկեղեցականներու թողուցէք որ խօսինք ուզործենք. մենք ձեզի պէս կաշկանդեալ չենք. մեզի այսքան մի՛ ճնշէք:

Տարաբաղդ եկեղեցականը եթէ սրատեսութեանը չափ ալ նկարագրի կորովով օժտուած ըլլար, մէկզի կը նետէր պէյերը, ու ազգը իր կոնակը առած բողոքովին տարբեր ընթացքի մը կը հետևէր:

Չենք գիտեր թէ Օրմանեան պատրիարք արդեօք կը զգայ թէ ազգին խտացեալ ատելութիւնը Տատեանի դէմ է: Ոչ միայն հայերը, այլ նոյն իսկ այն իսլամները որոնք իրենց երկրին բարիքը կուզեն, եւ հեռատես են, անոնք ալ մահացու թշնամի են Արտաքին գործերու խորհրդականին, որուն գաւազարական պաշտօնը ոչ ոքին համար գաղտնիք է: Պատրիարքը որքան որ ալ խստիւ քննադատուած է, բայց մինչեւ աստիճան մը իրեն նկատմամբ ներողամտութիւն կը տիրէ, վասն զի Տատեանի զոհը կը նկատուի: Բայց Պատրիարքը բաւական նրբամիտ ըլլալու է սրպէս զի ըմբռնէ թէ ազգին գերագոյն շահերը ներողամտութեամբ չէ որ կը պաշտպանուին:

Թիւրքիա բնակող հայերը պատրիարքէն երբեք չեն պահանջեր որ երկրին իշխանութեանը դէմ իբրև թշնամի կանգնի, եւ ոչ ալ անիրականալի ծրագիրներու հետամտի: Բայց ամէնքն ալ կ'ըզձան որ պատրիարքը անկախ, ուղղամիտ մտքով քննէ այն բազմակնճիտ հարցը որ բարենորոգումներու խնդիր կը կոչուի, եւ անոր կարգադրութիւնը ազատէ էֆէնտիներու բռնապետական ազդեցութենէն: Պատրիարքը իրեն խորհրդակից եւ զօրավիգ ունենալով Թիւրքիոյ Հայոց, թէ՛ երկիրը թէ՛ Եւրոպա բնակող լըջամիտ մասը, կրնայ զօրաւոր կողմանի մը վրայ կեցած խօսիլ: Պոլսոյ նոր զէպքերը կը հաստատեն թէ հայոց մտքերը հանդարտած չեն:

Խեղացի Պատրիարքի մը համար այդ ազգային անհանդարտութիւնը զօրութիւն մըն է: Պատրիարք մը գաղափարով որքան աւելի թըքանէր ըլլայ, ազգային անհանդարտութիւնն ալ այնքան կ'ուժովցնէ զինքը թէ՛ իր ազգին, թէ՛ օսմանեան իշխանութեան օգտին աշխատելու համար:

Համբաւաւոր Բարթողիմէոս եպիսկոպոսը երբ 1894ին նախ քան Սասունի զէպքը, պատրիարքական ընտրելի կը ներկայանար, իր հետեւելիք քաղաքականութիւնը

պարզ բանաձեւի մը մէջ կ'ամփոփէր.

—Պիտի երթամ սուլթանին եւ պիտի յայտարարեմ որ՝ ես անձնուէր, ամենահաւատարիմ հպատակ մըն եմ, ինչպէս ի վաղուց անտի յայտնի է. բայց որպէս զի կարող ըլլամ ժողովրդիս վրայ ազդել, եւ ազգս անձնուէր հաւատարիմ պահել, պարտաւոր եմ կայսերական շընորհքներով ուրտխացնել ազգս եւ անով հանդարտեցնել:

Պաշտօնական լեզու մըն է այս, որ շատ քաղաքավարօրէն կը հասկցնէ թէ, հայ ազգը չկրնար հանդարտիլ մինչեւ որ իր արդար պահանջումներուն զոհունակութիւն չստանայ: Հաւանական է որ Բարթողիմէոս եպիսկոպոս այս լեզուն պիտի գործածեր, որքան յաջողութեամբ չենք գիտեր, բայց յայտնի է որ եթէ չկարենար բան մը ընել եւ ազգը մնար այն վիճակին մէջ ուր կը գտնուի Օրմանեան Պատրիարքին օրով, Բարթողիմէոս Պատրիարք մը ս'չ թէ շորս տարի այլ շորս ամիս անկարող պիտի գտնուէր պաշտօնավարել: Օրմանեան պատրիարք շորս տարի է աթոռին վրայ կը մնայ, որովհետև այս զմբաղդ կացութեան պատասխանատուութիւնը մեծ մասամբ Տատեանին վրայ ծանրացած է: Բայց մինչեւ ե՞րբ պիտի ներուի իրեն այդ սեւ շուքին տակ կծկտիլ:

ՊՈԼՍՈՅ ԶԵՐԲԱԿԱՍԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախորդ թուով ծանուցինք, երուական թերթերէն անելով, Պ. Ալիքսան Սրգուեանին Պոլսո ձեռքակալման լուրը: Հետզհետէ հասած տեղեկութիւնները կը հաւատարմութեամբ թէ այդ զէպքը շատ մեծ աղմուկ յարուցած է Պոլիս, ուր Սրգուեանի արժանիքն ու կարեւորութիւնը ըմբռնուած է: Սուլի անը մասնաւոր իրատեղով մը իր զոհունակութիւնը յայտնած է ոստիկանութեան նախարարին: Իսկ Բերայի կառավարիչը պաշտօնական կողմէն, վասն զի ենթադրուած է թէ երիտասարդ հայը բաւական մասնակ Բերա բնակած ըլլայ, պատրելով ոստիկանութեան աշարջութիւնը:

Չերբակալութիւնը կատարուեր է օգոստոս 6 հինգշաբթի զիշեր, վաւփոր Ենի-Մահալէ թաղը: Ոստիկանները զիշերանց յանկարծ մտեր են օտարահպատակի մը տուն, ուր հիւրընկալուած է եղեր Պ. Արզուեան:

Կը թօի թէ մասնիչը հայ մըն է, որ երբեմն օսմանեան թղթատարութեան մէջ կարեւոր պաշտօն մը ունէր. երկու հազար ոսկիի զողութեան մը ամբաստանութեամբ զատապարտուած ըլլալով, անցած էր Բարիզ ուր գա-

նագան հայոց հետ տեսակցել յետոյ Պուլկարիա և Յու- նաստան եւս կ'այցելէ, եւ տեղեկութիւններ կը հաւա- քէ մասնաւորապէս Պ. Արզուեանի մտոին: Հասնելով Պո- լիս կը տեղեկագրէ թէ իր համոզմամբ այդ երիտասարդը Պոլիս ըլլալու է: Դիպուածին բերմամբ այդ անձն ալ Ենի-Մահալլէ բնակելով, կ'երևի թէ Արզուեանը նըշ- մարած ըլլալու աոիթը սենեցած է, եւ անմիջապէս հա- ղորդած է ոստիկանութեան, նախկին պաշտօնէին գատա- պարտութիւնը ներուած

Պ. Արզուեանի վրայէն ամերիկեան հպատակութեան պաշտօնաթուղթ մը գտնուելով, Պոլսոյ Ամերիկեան դես- պանատունը ուզած է զինքը իբր ամերիկեան հպատակ նկատել. բայց յայտնի չէ թէ այս պահանջուով մինչեւ որ աստիճան պիտի յաջողի:

Այս առթիւ շատ մը ձերբակալութիւններ կատար- եւած են, ոստիկանութիւնը բանտերը լեցուցած է այն ամէն հայերը որոնք իր աչքին կրնան կասկածելի երևիլ:

Քանի մը հարիւր հայ ալ իրենց երկիրը զրկուեց- են: Կ'երևի թէ խտուութիւնները չափազանցութեան սահ- մանները հասած են որով պատրիարքը բողոքելու հար- կը տեսած է:



Բիւթերի Գործակալութիւնը այս առթիւ Պոլսէն ըն- դարձակ տեղեկութիւններ կը հաղորդէ, տեղեկութիւն- ներ որոնց կցուած կարգ մը յիմարական խորհրդածու- թիւնները կը մատնեն բղիժման աղբիւրը:

«Երկու ամիս առաջ, կը գրէ Բիւթեր, Փրանսուհի տիկին մը Մարսելլէն Պոլիս հասաւ հայ սպասաւորի մը հետ, եւ Բերա արարթման մը վարձեց, ուր թիչ ետքը իրեն եկաւ միացաւ ուրիշ հայ մը որ ինքզինքը Տքթ. Քոչնէր կ'անուանէր: Բայց այս երկրորդին իրական ա- նունը Ալեքսանդր Արզուեան էր, եւ իր անունին Ա- մերիկեան անցագիր մը ունէր: Հայ լրտես մը այս երեքն ալ ոստիկանութեան մատնեց, եւ իրենց տունը խուզար- կութիւն կատարուեցաւ: Արզուեան ձերբակալուեցաւ, և վտանգաւոր թուղթեր գտնուեցան, որոնք ցոյց կուտա- յին թէ արտասահմանի յեղափոխական քօմիթէներու գործակալն է, եւ զէնք ու ուղղամտները կը բաժնէ Պոլ- սոյ Հայոց մէջ, ցոյց մը կազմակերպելու նպատակաւ: Ութ հոգիի ցուցակ մը գտնուեցաւ, եւ ամէնքն ալ ձերբակալուեցան: Սպասաւորը, որ ինքն ալ քօմիթէին կը պատկանէր, յաջողեցաւ փախչիլ: Արզուեան ոոնցա- գիր մը ապահովցուցած ըլլալով, չուրացաւ իր առաքե- լութիւնը: Յայտարարեց թէ ցոյցի մը համար ո՛ր եւ է թուական որոշուած չէ, որսվհետեւ քօմիթէէն հրահանգ- ներու կը սպասեն:

Այս տեղեկութիւններէն ետքը գործակալութիւնը կը խօսի բանտարկեալներու վիճակին վրայ: Կը տեղեկացնէ

թէ 200 հայ արգէն իրենց երկիրը ճամբուած են, 200 հատի շափ ալ բանտն են:

Սակայն վերջին մասը որ խորհրդածութիւններ կը պարունակէ յայտնի է թէ ներշնչուած է ուղղակի այն- պիտի անձնաւորութիւններէ որոնց շատ սահմելի եղած է Պ. Արզուեանի Պոլիս երևումը: Այժմ կը ջանան վա- տահամբաւել անձնուէր ու խահական երիտասարդը, որ կարգ մը անխոստովանելի շահերու անհաշտ թշնամին եղած է: Առանց գժուարութեան կրնանք ընդունիլ թէ հեռագիրը Տատեանէն խմբագրուած է: «Կառավարու- թեան և Հայոց միջեւ յարաբերութիւնները վերջերս ա- րագապէս կը լաւանային շնորհիւ Տ. Օրմանեանի հաշ- տարար քաղաքականութեան»: — Սպաղանքը: Այդ անցնինք: Ուրեմն այն պահուն որ երջանկութեան թուա- կան մը պիտի բացուէր ահա Պ. Արզուեան Պոլիս կը մտնէ որպէս զի Սարափի օրերը վերանորոգել տայ, ու տրբ հալածանքը վերսկսի, անոր դէմ կուռելու պատրուա- եաւ հանգանակութիւն տեղի ունենայ: Այս յիմա- րաբան գրպարտութիւնները ներշնչողը պահ մը չէ՞ մը- կածած թէ Հայոց դէմ հալածանքը բոլորէ մը արգեօք զաղար առած է:

Լոնտոնի մեծ թերթերը այս հեռագիրը կա՛մ բնաւ չհրատարակեցին, կա՛մ վերջի ստայօղ գրպարտութիւն- ները բոլորովին ջնջեցին: Առտուան մեծ թերթերէն մէկը միայն, Մօրնիկի Բօքս, ամբողջապէս հրատարա- կեց Բիւթերի տեղեկութիւնները եւ միանգամայն խըմ- բապրականի մը նիւթ ըրաւ գանձը:

Անգլիոյ մէջ երեսփոխանական նոր ընտրութիւններ կը կատարուին. Ազատական կուսակցութիւնը պահ- պանողականներուն երեսին կուտայ անոր անգօրութիւնը հայկական ջարդերուն մէջ. եւ ահա արքունական մեծ թերթը Պ. Արզուեանի Կ. Պոլիս երևումէն կ'օգտուի հան- գուցեալ կլատսթօնը գտտապարտելու, իբր պատասխա- նատու Սրեկլքի դէպքերուն: Ըստ Մօրնիկի Բօքսի, Կը- լատսթօն Հաուարտնէն իրնամակներովը, ճառերովը ար- գելք եղած է Արեկլքի մէջ հանդարտ կացութիւն մը ստեղծելու համար Սոլդակրիի քաղաքական ձեռնարկ- ներուն:

Պահպանողական թերթը կը վերջացնէ յօդուածը ձայնակցելով Բիւթերի Արթինաշունչ մաղթանաց թէ Պ. Արզուեանի անցագիրը անվաւեր նկատուի եւ այդ երի- տասարդը ծանրապէս պատժուի: Այս մաղթանքները ցոյց կուտան թէ բաւական մեծակ երկիւղ կը տիրէ Պոլիս:

ՍՊԱՀԱՆՔԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Սպաղանքի կոտորածին վրայ Ռիթերի գործակալութիւնը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ:

«Սպաղանքի շրջականները բնակող քիւրտ ցեղին պետը Խալիլ Պէշեր, անցեալ տարի Սպաղանքի վրայ յարձակում ընելէն ի վեր, զեղին բնակիչները զգուշութիւններ ձեռք առած էին նոր յարձակումի մը դէմ, ուստի ամէն զիշեր ալ պահակներ կը հօկէին: Կոտորածին օրը, յուլիս 16ին, Բաղէշի զինուորական հրամանատար Ալի փաշա Սպաղանքէն ժամ մը հետո կէլիկիւզան կը գտնուէր, քննելու համար Խալիլ Պէշերի հաղորդած տեղեկութիւնները թէ այդ կողմերը յեղափոխական հայեր կը գտնուէին: Սպաղանք պահակները իրենց հսկողութեան պտոյտը վերջացուցած էին, ու ճիշտ արեւը ելլելու պահուն էր որ հայ տղայ մը արտը գացած ատեն նշմարեց թէ զեղը պաշարուած էր: Անմիջապէս զեղը իմացուց, եւ ահա ընդհանուր սարսափը տիրեց: Ո՛ր եւ է ինքնապաշտպանութեան մտածում չկար: Տասերեք երիտասարդ միայն որոնք հրացանով զինուած էին փորձեցին թշնամիներուն շրջանակը խորտակել: Իրենցմէ երկու հոգի սպանուեցաւ, եւ զինուոր մըն ալ վերաւորեցին, իսկ մնացածը կը կարծուի թէ յաջողած է փախչիլ. պաշարողները ուրիշ ընդդիմադրութեան չը հանդիպեցան. ա՛յ քիւրտերուն եւ զինուորներուն գործը շատ դիւրին էր, եւ կոտորեցին ինչ որ ձեռքերնուն տակ ինկաւ, էրիկմարդ, կնիկմարդ, տղաք, ամէնքն ալ: Գեղացիներէն ոմանք եկեղեցիին մէջ ապաստանարան փնտռեցին, ուր ամէնքն ալ այրուելով մեռան: Չհերոնն ամբողջ թիւը կարելի չե՞ ճշգրտապէս որոշել, վասն զի բընակիչներէն ոմանք յաջողած են քովի գեղերը փախչիլ. բայց ամէն պարագայի մէջ շարդուողներուն թիւը 100էն պակաս չէ: Կոտորածէն յետոյ քիւրտերը բոլոր դիակները մէկտեղ հաւաքեցին եւ վրան բէթրու լեցնելով այրեցին:

Սպաղանք որ առաջ 30-35 տունով եւ 250 բնակչով զեղ մըն էր, հիմակ սեւցած աւերակներու կոյտ մըն է:»

Հայաստանի այս աղէտալի դէպքերուն առթիւ պ. Յակոբեան ընդարձակ բողոքագիր մը ղրկած է Մօրենիկ Բօտի որ սակայն կը շատանայ իմաստը միայն հաղորդելով:

«Սուլթանին եւ հայոց մինչեւ յարաբերութիւնները օրէ օր լուանալու վրայ էին» կ'ըսէ Մօրենիկ Բօտ խըմբագրականի մը մէջ Կ.պոլսոյ վերջին դէպքերուն առթիւ: Եւ սակայն Սպաղանքը յուլիսէն կը թուագրուի:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ. Կ. պոլսոյ քիւրք քերքերը հրատարակեցին քե Շահր. զոր հոն գացած է, առաջին անգամ երբ սոչրանին հետ դիմ դիմ եկած են, խուսարներ եւ անոր ձեռքը պագեր է: պարսկական շրջանակները կը հերքեն այս տեղեկոչութիւնը: Կ. պոլսոյ պարսիկ գաղթականութիւնը սաստկապէս զայրացած է որ քիւրքերը կոչեն միշտ Շահր իրր սոչրանին ստորադասեալը ներկայացնել իսլամներուն աչքին:

ԹԻՒՐԻՓԻՈՅ ելտացոյցը այս տարուան համար մէկ միլիոն ոսկի բաց ցոյց կոչուայ եղէր: Երե բացը արդարեւ այսքան է, բաւ մը չէ. բայց բազմապատկոչութիւն մը կրնայ կացութիւնը մշտարտոնքեան առեղի մօտեցնել:

ՍՈՒԼԹԱՆԻՆ անձնական գանձուն նախարար Սազգ Յովհաննէս Լ. ֆենտի հրամարեր է, և իրեն պիտի յաջորդի եղեր Չարէն Տիւրքի Էֆենտի:

ԷՐՋՐՈՒՄԻ Ռուսական Հիւսպատոսը վանի իր անգլիացի պաշտօնակցին բաղդակից կը գտնուի: Ռուս հագարապետի մը հետ երբ Երզնկէանի մօտերը ուղեւորութիւն մը կ'ընէր, քիւրտերը վրանին յարձակելով կը կողոպտեն ինչ որ շէնին անոնք. ապահովութեան համար իրենց ղեկերացող զինուորներէն երկուքն ալ կը սպաննեն, Գիւրտերէն ալ հիւզ հոգի կը մեռնին:

Հայաստանի եզրուպական հիւսպատոսները երե կոչգեւ քո՛ղ ալ ապի ետքը քննական [պտոյտներու էլլեն, սոչրանը անոնք ալ իրենց տեղը նստեցնելու միջոցը գտաւ:

ՀԱՍՑԷ ԵՒ ԲԱՍՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵՍՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար:

ՆՈՐ ԿԵՍՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին ղրկել ա՛՛

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W7